

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Ը. — ՇՐՋԱՆ ԺԸ. 1885 ՏԱՐԻ ԺԱ. ՕԳՈՍՏՈՍ 31.

«Հիւսիսային գործակալութիւնը հեռագրում է Օգոստոսի 2-ից՝

«Նախկին եւ Բեսարաբիոյ Հայոց թեմական առաջնորդ ՄԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ կոչման մէջ հաստատուելով՝ արձակուում է իւր վարած պաշտօնից»:

(Արձագանք № 5)

Տ. Տ. ՄԱԿԱՐ՝ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՍՏԱՏԵԱԼ։

Ընդհանրիս առաջին երեսին տպեալ Հիւսիսային գործակալութեան հեռագիրը յայտնում է որ Սինոդի աւագ անդամ և Պախիչևանի ու Ռեսարաբիոյ վիճակաւոր առաջնորդ Մակար Եպիսկոպոս արձակուելով առաջնորդութիւնից, տարաբաղդութեան ընտրութեան առաջարկութեամբ հաստատուել է ԾՐԱՐԿՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԸՍՏՆՏԱՑՆ ՀԱՅՈՑ։

Բարատ հաշակելով այս լուրը ի գիտութիւն ընթերցողաց՝ հրատարակում ենք նորին Վեհափառութեան Տ. Տ. ՄԱԿԱՐԻՈՅ կենսագրութիւնը պաշտօնական ցուցակ ծառայութիւնից քաղելով։

Նորին Վեհափառութիւնը աշխարհական ծագումն և 70 տարեկան պատկառելի, փորձառութեամբ և գիտութեամբ բարեգաւաճեալ հասակ ունի։ 1831 թուին իւր ուսման ընթացքը Մայր Եթոռոյս Հոգևոր դպրանոցում աւարտելուց յետոյ հաճութեամբ հանգուցեալ ի Տէր Յովհաննէս Ե. կաթուղիկոսի սպացել է հոգևոր կոչման Ծորրորդ աստիճան։ 1838 թուին Ապրիլի 12 ին ձեռնադրուել է Սարկաւագ։ 1842 թուին Մարտի 25 ին ձեռնադրուելով Վարդապետ՝ նշանակուել է Մայր Եթոռոյս Հոգևոր դպրանոցում Ուսուցիչ — ուսուցիչ, և 1843 թուին Օգոստոսի 21 ին Սինոդի օրապրութեամբ կարգուել է Տեսուչ նոյն դպրանոցին հանգուցեալ ի Տէր Ներսէս Ե. կաթուղիկոսի հաճութեամբ և առաջարկութեամբ, Բարձրագոյն հաստատութեամբ 1817 թուի Ապրիլի 30 ին կար-

գումել է անգամ Սինոդի· 1818 թուին, Մարտի 15 ին գնացել է Պարսկաստան՝ հին ձեռագիրը գրքեր որոնելու· 1819 թուին ստացել է Մայր Էթոռոյս Մատենադարանի վերատեսչի պաշտօնը· 1852 թուին Ապրիլի 12 ին ձեռնադրութեամբ Հանգ· ի Տէր Ներսէս Ե· կաթուղիկոսի բարձրացել է յաստիճան Օայրագոյն Վարդապետութեան· նոյն թուի Օգոստոսի 15 ին ձեռնադրուել է Եպիսկոպոս, նոյն թուի Նոյեմբերի 10 ին նշանակուել է Մայր Էթոռոյս Վանական կառավարութեան անգամ և ծախսարար· 1858 թուին Դեկտեմբերի 15 ին Սինոդից նշանակուել է պատգամաւոր և գնացել է Ս· Պօլիս Հանգուցեալ ի Տէր Մատթէոս կաթուղիկոսին հրաւիրելու Ս· Էջմիածին:

1859 թուի Մարտի 10 ին ստացել է Եպիսկոպոսութեան կոչումն և նոյն թուի Յուլիսի 13 ին Սինոդի օրապրութեամբ նշանակուել է Ըսագ Լուսարար Մայր Էթոռոյս· 1861 թուի Ապրիլի 2 ին Հանգուցեալ ի Տէր Մատթէոս կաթուղիկոսից ուղարկուել է Թիֆլիս՝ տեղւոյն Ներսիսեան Հոգևոր դպրոցը կարգաւորելու համար: 1862 թուի Օգոստոսի 9 ին Հանգուցեալ ի Տէր Մատթէոս կաթուղիկոսի կոնդակով նշանակուել է Թիֆլիսի Թեմի կառավարիչ և 1864 թուի Մարտի 15-ի առաջարկութեան համեմատ բարձրագոյնս հաստատուել է Վրաստանի և Իմերէթի Հայոց Թեմի վիճակաւոր Առաջնորդ: 1876 թուի Փետրուարի 20 ին Հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ· կաթուղիկոսի առաջարկութեան համեմատ արձակուելով Թիֆլիզեղուս առաջնորդութիւնից՝ Բարձրագոյնս հաստատուել է վիճակաւոր Առաջնորդ Նոր—Նա-

խիջևանի և Ռեսարաբիոյ, և ըստ առաջարկու-
թեան հանգուցեալ ի Տէր Գէորգ Ե. կաթուղի-
կոսի 1883 թուի Յունվարի 7 ին Ռարձրագոյնս հաս-
տատուել է Սինոդի անդամ, իւր վերայ ունենալով
նաև Նոր-Նախիջևանի և Ռեսարաբիոյ առաջնոր-
դական պաշտօնը: Նոյն 1883 թուին գալով Մայր
Էթոռս և ստանձնելով Սինոդի անդամութեան և
ըստ աւագութեան՝ Սինոդի Ընենապետի Տեղակալի
պաշտօնը՝ նոյն թուին ի կողմանէ Մայր Էթոռոյս
դնացել է Մոսկվա Ամենողորմած Թագաւոր կայսեր
ԱԼԵՔՍԱՆԴՐ III-ի թագադրութեանը պատգա-
մաւորելու: Ընդհետև նոյն թուի աշնանը գալով
Մայր Էթոռս, վարել է Տեղակալութեան պաշ-
տօնը, իմաստութեամբ և խոհեմութեամբ Նախրա-
գահելով 1881 թուի Մայիսեան կաթուղիկոսա-
կան ընտրութեան ժողովներին, որից յետոյ գնա-
ցել է իւր թեմը. իսկ այս տարի Ապրիլեան ընտրու-
թեան ժամանակ ի հաստատութիւն առաջար-
կելեաց երկրորդը լինելով՝ ամսոյս 2 ին բարեհաճ
կամօք ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ՝ արձակուելով Նոր
Նախիջևանի և Ռեսարաբիոյ առաջնորդութիւնից՝
Տ. Տ. ՄԱԿԱՐ *հաստատուեց* ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԵՑՆ ՀԱՅՈՑ:

Ինչպէս ընթերցողները տեսանուն Նորին Վե-
հափառութիւն Տ. Տ. Մակար ի սկզբանէ անտի
Մայր Էթոռոյս վրէ կատարել է բարձր պաշտօն-
ներ, որով արժանացած ժամանակի Վեհափառ կա-
թուղիկոսների բարեհաճութեան՝ ստացել է եկե-
ղեցական բարձր աստիճաններ և վարձատրուել է
Հանգ. ի Տէր Ներսէս Ե. կաթուղիկոսից 1851
թուի փետրվարի 14 ին, ընդունդն ջանքի և ան-

նենգ Հաւատարմութեան համար՝ Վարդապետական ականակուռ խաչով, ի յիշատակ 1853–56 թուի արևելեան պատերազմի՝ բրօնզեայ խաչով և մեդալով և 1854 թուի Մայիսի 22 ին ստացել է Նպիտկոպոսական պնակէ: Հանգ. ի Տէր Մատթէոս կաթուղիկոսի վարձատրուել է Օսմանցոց Մէջիտիէ պատուանշանը ստանալով և եկեղեցու բազմամանակեայ Հաւատարիմ ծառայութեան համար 1863 թուի Օգոստոսի 30 ին Ս. Վլադիմիրի Գ. աստիճանի պատուանշանը ստանալով: Հանգուցեալ ի Տէր Գէորգ Ե. կաթուղիկոսից վարձատրուել է 1869 թուի Մայիսի 9 ին Սրբոյն Ստանիսլաւի առաջին աստիճանի և 1881 թուի Յունվարի 1 ին Սրբոյն Աննայի Ը. աստիճանի պատուանշանները ստանալով:

Համառօտապէս յիշելով Նորին Վեհափառութեան արած ծառայութիւնները և ըստ արժանեաց վարձատրութիւնը, աղօթենք առ ամենաբարին Աստուած, որ երկար ամ, ոյժ, կարողութիւն և զօրութիւն տայ Նորին Վեհափառութեան արդարութեամբ և իմաստութեամբ կառավարելու Ս. յանձնուած հօտը, հանգուցանելով ի վայրի դալարուղ և առ ջուրս հանգստեան. ամէն:

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՄՕԹԱԾՈՒԹԻՒՆ.

(Յհ. Ա. Ի՝, 4—6)

Ասացած՝ իմ կեանքիս պատճառն ու ակը՝ աչքիս արատութիւնից ինձ հեռու պահելիր ու ամենայն չար ցանկութիւնից ազատ մնամ։ Մի թողնիլ, որ ճանապարհից դուրս գամ, անարատ կեանքիս հեռանամ և անամօթ սրտից ինձ պահես։

Ես մտածեմ սիրտ իւսիմ՝ ոչ ամօթխածութիւն, որ առաքինութիւններուն մէջ ամենահրապուրիչն ես, ամենայն առաքինութիւնների զարգարանքն, հովանաւորողն ու պաշտպանն ես, որ համեստութեան քոյրն ես և հեզութեան ու խոնարհութեան մայրն։

Մոլութիւնն էլ ունի իւր զարդարանքն, որով ճոխանում է և գեղեցիկ երեւում, մեր աչքն իրան քաշում, մեր ղգացմունքներն հրապուրում։ Եթէ այդ արատաքին հաճոյական և ցանկալի երեւոյթը չունենար, ոչ կըլլներ, որ մեղքը սիրէր, որ և իցէ յանցանք գործէր, զօրաւոր և անդիմադրելի կերպով հրապուրելով ու խաբուելով, որով մարդուս աչքը մուխ է կոխում և մոռանում որ մեղքն իւր գեղեցիկ ու հաճոյական հրապոյրներովը գրաւելով, իրան համեցէք է անում խմելու թոյն՝ ոսկեզօծած բաժակների մէջ։ Բայց առաքինութիւնը բացի իւր յաւտուկ գեղեցկութիւնից՝ ուրիշ ոչ մի հրապուրիչ ու գրաւիչ բան չունի, հաւանուելու համար, առաքինութեան այդ գեղեցկութիւնը նոր չէ ստեղծւում, այլ միայն առաւել և աւելանում է այն քօղովն, որ ամօթխածութիւնը նորա վերայ քցում է։

Արդէն ի բնէ ամեն մի մարդու սրտի մէջ դրած, կամ այսպէս ասեմ, անկած է այն ղգացմունքն, որով նա հասկանում է թէ՝ ինչն է վայելուչ բանն։ Այդ ղգացմունքը միայն լաւ դաստիարակութեան գործ չէ. ամենաբերտ վայրենի մարդն անգամ, որ անտպատ տեղ է կեանքն անցկացնում, մարդութիւնից զուրկ բարբարոսն անգամ քաշվում՝ հրապարակաւ՝ ու մարդոց առաջ մի անվայել բան անելուց։

Խաստիարակութիւնը չէ կարող վայելուչ բանի զգացմունքը մարդուս փոքր հասակի մէջ եղած ժամանակին նոր ստեղծել, այլ միայն կերպաւորել, յառաջ տանել ու զարգացնել ու նորան ընկերական կեանքի մէջ աւելի որոշ ուղղութիւն տալ։

Ուսոմն իրօք աւելի մեծ աշխատութիւն պէտք է՝ վայելուչ բանի համար մեր ունեցած այս ընածին զգացմունքը մեր մէջը խեղդելու, քան թէ զարթնեցնելու։ Արդէն մի գարշելի վարժութիւն պէտք է, որ անվայել բանից կարմրելը մոռանայ մարդ և զզուելի բանն առանց քաշուելու անելն իւր համար սովորութիւն շինի։ Որքան էլ որ վիշտացած լինի մարդս, բայց և այնպէս շատ անգամ, տեղը որ գայ, երեսը պէտք է կարմրի։ Պատճառ որ ամօթխածութիւնը՝ մեր ներքին պատուանդի, ուզումեմ ասել, մեր խղճմտանքի գոյրն է։

Ամօթխածութիւնը զարթնում է անմեղ մանուկների մէջ վայելուչ բանի մի կատարեալ ուսում առանալուց առաջ։ Երանի նորան, ով որ մի երեխայի նման այս գեղեցիկ մանկական սիրտն ու զգացմունքը պահած կըլինի մինչև իւր խորին ծերութեան հասակն։ Նա միշտ սիրելի կըլինի իւր ունեցած այսպիսի սիրուելու և որանից յարգուելու արժանի զգացմունքով։ Մարդուս մաքառ սրտի և անարատ հոգւոյ տէր լինելն լինչ հասակի և լինչ սեռից ուզումէ լինի, երեխայ՝ թէ օրիորդ, պատանի՝ թէ այր մարդ, ծերունի՝ թէ տանուտիկին, թէ հասակն առած այրի՝—այնպիսի մի կախարդիչ գեղեցկութիւն է տալի նորան, որ անդիմադրելի կերպով գրաւում, գերում է։ Քնքոյշ և ազնիւ զգացմունքն ամեն մի հասակի մէջ եղած մարդուն տալիս է իւր աւելի բարձր արժանաւորութիւնն։

Ամօթխածութեան հակառակ զգացմունքն՝ անամօթութիւն է ու լկտիութիւն. այս այնպիսի մի զգացմունք է, որ դէն է գնում նորը և ազնիւ կերպով մեծացած մարդոց սրտած կամ անելու ամենայն դատապարտութիւնն. այս այնպիսի մի սաստ և բոլորովին բթացած ու այլանդակուած զգացմունք է, որ արհամարհում է բարեվայելուչ բանն, ծաղրում է աստուածային օրէնք, որ մեր սրտի մէջ կայ։

Անամօթութիւնը կարող չէ տեղի ունենալ առանց կորելու ամենաքնքոյշ արմատից բարոյական զգացմունք, որ մարդուս մէջ կայ, առանց ջնջելու մեր սրտից առաքինութեան զգացմունքը։ Անամօթութիւնը կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ որ

առաջ կծռուին մարդկային արժանաւորութեան վերայ մեր ունեցած ամենայն գաղափարները։ Երբ որ մարդս այդ սարսափելի վիճակին է հասնում, ամօթ ու պատկառանքը կորցնելով, այն ժամանակ գարշելի բանը նորա համար պրպուիչ է լինում, անվայել ու անպատկան բանը՝ հաճելի, անբնականը՝ բնական, տգիտկեշտութիւնն՝ արուեստակեալ մի բան, անամօթութիւնը՝ նախապաշարմունք։

Պատիւ, ամօթ ճանաչող մարդոց խօսքերն չէ լսում, այլ փչացած մարդոց դիւր եկող ու հաւան կացող լերբ ծիծաղին է մեկ տալի. չէ ականջ անում իւր իսկ սեպհական համոզման վայելուչ բանն անել յորդորող ձայնին, այլ համարում այդ ձայնն երեխայական յիմարութեան ձայն։

Թերևամտութիւնը նորա հայրն է, իսկ զգայական ցանկութիւնը՝ մայրն։ Դիւր գալու համար ամօթ ու պատկառանք բոլորովին մեկ կողմն է դնում ու յանդուգն աներեսութիւնով բայ անում իւր մերկութիւնը։ Սրանօք և նախապաշարմունքից բարձր երևելու համար, խաղ անելու նման բան է համարում իւր հասար անպարկեշտ խօսքեր բերնից հանելն, անբարոյական, անհամեստ շարժմունքներ անելն, ամենևին չէ քաշվում զգուելի երիմոի բաներ բանեցնելուց խօսակցութեան մէջ. շատ գոհ և ուրախ է լինում, երբ որ իւր այդպիսի գարշելի խօսքերն իրան նմանների մէջ խրխնջոցի պէս ծիծաղ է բարձրացնում։ Իւր անամօթութեան վերայ պարծենում է և իւր արած վատ բանով փառաւորվում է. մի քանի մարդու նման որ պատերազմի մէջ մեծ յաղթութիւն է անում։ Բայց և այնպէս մինչև անգամ սատկիկ փչացած մարդոց վերայ էլ մեծ զօրութիւն և այժ ունի բնածին պատկառանքն առաքինութեան առաջ։ Միայն անպատկառների մէջ համարձակվում է անպատկառ լինել. բայց ամօթ ու պատկառանք ունեցող մարդոց առաջն անամօթ մարդն զարմանքի վում է, ինքն իրան այնպէս պահում, որ գոնէ պարկեշտ երևի։ Անամօթ մարդը կկեղծաւորուի էլ՝ իրան լաւ ցոյց տալով, որ պարկեշտ մարդոց մէջ լինել ու ապրել կարողանայ. իսկ եթէ նա իր անամօթութիւնը թողնել ու փոխուել չկարողանայ, հասարակութիւնը նորան՝ իբրև անտանելի գարշելի մարդ՝ իւր մէջից կհանի, դուրս կձգի։

Ի՛նչպէս երեսին մեկ տալու չէ այն անամօթ պատանին, որոյ

վարքն իրան մնանումէ, որ նա վազուց իւր անմեղութիւնից հեռացել է, փչացել է ու վատ գործի գերի է։ Ինչպէս զզուելի է տարիքն առած մարդն, որ իւր անպարկեշտ խօսակցութեան ձեւերովն փոքրահասակ, միամիտ ու անմեղ տղին ամօթու կարմրացնումէ և ուրախանումէ, որ կարողացաւ նորա և ուրիշների քընքոյշ զգացմունքին դիպչել։ Ինչպէս արհամարհելի է մանաւանդ այն կնիկն, որ իւր աչք ունքովն ու շարժուածքովն ցոյց է տալիս, թէ պատրաստ է ուրիշ աղամարդոց անպարկեշտ ցանկութիւններին որսը լինել ու աւար գնալ։ Բնութիւնն, այսինքն՝ Աստուծոյ աչն աղամարդիկներից շատ աւելի պինդ է կնանիքի մէջքն կապել բարոյականութեան և պատուաւորութեան թանկագին գօտիով։ Եթէ որ բարոյականութեան այս կամարը մի փոքր էլ որ թուլանայ և այնպէս պատահի, որ մի քիչ բացուի ու մի փոք րիկ ճեղքուած երևեցնի, ինչպէս որ մի կամարակապ շէնքի մէջ, այն ժամանակ չար կրքի կատաղի հոսանքի առաջն առնել էլ ոչ ոք չկարողանալ։ Սորա համար անհերքելի է մնում այն փորձած խօսքը թէ՝ մարդկային սեռի մէջ բարոյական կինը ամենազնիւ բացուած ծաղիկն է, բայց և ոչ ոք չէ կարող այնպէս սաստիկ պատուից ընկնել, քան թէ անբարոյական կինը։

Եւ ինչպէս կարելի է, որ մի աղջիկ դէն քցի իրան անպէտք մի բանի նման՝ այն ամենագեղեցիկ զարդարանք, որով իւր աղքատութեան մէջն էլ գրաւիչ ու սիրելի է երևում։ Ի՞նչպէս կարելի է, որ մի կին ինքն իրանից գողանալով՝ զրկի իրան այն իւր բազդաւորութիւնից, որ իւր պատիւը պաշտպանող զէնքն է։

Այսպիսի մի թանկագին բան, որ ամեն մի մարդու համար մեծ նշանակութիւն ունի, քրիստոնէի համար աւելի և էս մեծ արժէք պէտք է ունենայ, որովհետև իւր սրտի մաքրութիւնից ու ազնուութիւնից աւելի մեծ, աւելի սևեռական, աւելի երջանկացնող բարիք չէ ճանաչում։

Ամօթխածութեան ամենալաւագոտորը թշնամին՝ աւելի կանանց սեռի մէջ՝ այն չափից դուրս դիւր գալու ցանկութիւնն է, որոյ համար խելքները տանել են տալիս, ամենայն կերպ աշխատելով, որ շնորհքով, սիրուն երևեն՝ որ իրանց հաւանեն։ Եւ աւելի աւելի նորաձևութեան (մօդայի) ետևից ընկնելն է, որոյ համար ներելի է համարվում մարդուս շատ վատ թուլոյ անհաշիւ ու անկարգ սխալներ անելն և շատ անգամ ծիծաղելի հա-

գուսան էլ իբրև անպատճառ հարկաւոր ու շատ վայելուչ ընդունվում՝։

Կինն, որ Աստուածանից աւելի քնքոյշ և աւելի գրաւիչ կերպով է ստեղծուել, քան թէ այր մարդն, որին բաժին է ընկել արտաքին կեանքի աւելի ծանր ու դժուարին բեռը տանել ու աւելի մեծ նեղութիւնները քաշել, կինն, ասումեմ, աւելի նուրբ զգացմունք էլ ունի բարեվայելուչ ու ամօթ չբերող բանի համար, քան թէ այր մարդն։ Կինն, որ իւր կակուղ ընաւորութեամբն ընտրուած է այր մարդու խստութիւնն իւր հեզութեամբն ամոքելով կառավարելու, նորան կապելու այն բանին՝ ինչ որ գեղեցիկ է ու բարի, սորա համար կինն՝ թէ աղջիկ ասած զ վերին աստիճանի ամօթխածութեան զգացումն ունին։ Բայց այն կինն՝, որ այդ քնքոյշ զգացումը կորցրել է, ու էլ վախ չունի մի անմաքուր գործից, թող թէ մի անմաքուր մտքից, բոլորովին կորցնում է իւր պատիւն և անարգ մի արարած է համարվում իւր իսկ սեռի մէջ, իսկ այր մարդոց սաստիկ արհամարհանային է արժանանում։ Նա իւր ամենաազնիւ կոչմանը դէմ մեղանչել է. եթէ իւր արտաքուր կեանքի մէջ մարմնոյ գեղեցկութիւնն էլ որ կորցրած չլինի, բայց և այնպէս նա դադարել է իւր սրտի և հոգւոյ ազնուութիւնովը սիրուն ու գրաւիչ լինելուց։ Անառակ մարդու ագեղ ցանկութիւնը կշարժի, բայց մի ազնիւ զգացմանց տէր մարդու սիրտն՝ էլ չէ կարող շարժել։ Նա ինքն իրան դուրս է քցել արժանաւոր կանանց կարգից, սորա համար ամենայն իրաւունքով աստելի ու արհամարհելի է դարձել ամեն լաւ վարքի տէր այր մարդկանց ու կանանց։

Ամեն բան, ինչ որ մեր զգայականութեանն ու նորանից յառաջ եկած մեղսական հակումներին մեծ կշիռ է տալիս, Քրիստոսի մեզ աւանդած ուսմանը հակառակ է։ Սորա համար պարտականութիւնն է Քրիստոսի աշակերտի, որոյ համար Աստուած ու յաւիտենական կեանք գեռ և այս իրանց նշանակութիւնն ունին, բարոյական անկարգութեան ամենավտանգաւոր աւիւնն անգամ իրանից հեռացնել։

«Ոչ թէ արտաքին զարդարանքն, մազերի հիւսուածները, ոսկիների շարքերն ու հագուստներ հագնելու կերպն, այլ սրտի անեղծութիւնը, հեզ ու հանդարտ հոգին է պատուական՝ն Աստուծոյ առաջն»։ (Ա. Պետ. Գ. 3, 4.)։

Սուրբ Աւետարանը չէ արգելում մեզ երկրաւորն էլ պարզարել։ Դրսի գեղեցկութիւնով մարգս աննշմարելի կերպով առաջնորդվում է հասնելու ներսի գեղեցկութեան, այսինքն՝ սիրելու այն, ինչ որ իւր գործերի մէջ ազնիւ ու արդար է, և ինչ որ հեզութիւնով է արել։ Բայց Քրիստոսի կրօն արգելում է մեզ այն, ինչ որ հաճելու զարդարուելու կերպովը մեր զգացմունք գլգռում է դէպի անպարկեշտ բանը։

Հագուստի, նորաձևութեան մէջ տիրող սովորութիւնը կարող է միշտ անխելք սխալմունքների մէջ էլ քցել, որոնք մարդուս աւելի տգեղացնում են, քան թէ գեղեցկութիւնն աւելացնում, Բայց նոր ձևով հագնուելու կապուելու, սանտրուելու կերպը՝ անդադար փոխուելովն՝ մեր անելու սխալների մեծ մասը մինչև անգամ անվնաս է անցկացնում, պատճառ որ շատերը քիչ օրուայ մէջ անխելք ու ամենևին չհասանելու բան են համարում այն, ինչի վերայ որ մի քանի շաբաթ առաջ սաստիկ հաւանելով ու զարմանալով էին մտիկ տալիս։ Մինչև անգամ կարելի է ասել թէ՝ պարտականութիւն պիտի համարենք մեզ՝ որ քաղաքական ընկերութեան կամ հասարակութեան մէջ, մեր խելքին միայն հաւանելով, չհեռանանք եղած սովորութիւնից և գործածուած ձևից չդանազանենք տարբեր ձև ունեցող մեր հագուստովն։ խելօքութիւնն այն է, որ դրսից ուրիշների աչքին չընկնենք ու մեզ այնպէս ցոյց չտանք, որ չենք ուզում նորանոյ սովորութիւններին հետևել։ բայց հագուստն ամեն ժամանակ էլ պիտի լինի պարկեշտութեան ու բարեկրթութեան պատկեր։

Եթէ որ նորասերութիւնն հագուստների ու զարդարանքի կողմանէ անվայելուչ բանն էլ վայելուչ և ընդունելի համարի, եթէ որ կանանց մէջ ամենապարկեշտներն անգամ, թէև իրանց մըտքից վատ բան անց չկացնելով, նորաձև հագուստներ հագնելու կողմանէ յետ չմնալով, հետևեն իրանց առաջ ընկնող քոյրերին, որոնք զեղխ հագուստներով զարդարուելով, իրանց մարմնոյ գեղեցկութիւնովն ուրիշներին հրապուրիչ կերպով երևել են մտածում, այսպիսի անպարկեշտութիւնը միշտ իբրև մի բիծ կմնայ կանանց պատուոյ վերայ, ընդհանրացած սովորութիւնն անգամ չէ կարող ջնջել մեր սրտից պարկեշտութեան այս մաքուր պատուիրանն, որ սրտի պատուիրան է։

Ամենաթեթև կերպով անգամ դիտչելն անվայելութեան, նորա

սահմանից մազաչափ դուրս գալով, օրբապղծութիւն է։ Աննշմարելի կերպով մի քայլ որ ոտներս դուրս ենք դնում՝ պարկեշտութեան ճանապարհից, իսկոյն միւս քայլն էլ ետևիցն ենք անում։ Ա՛յն կինն, որ ունայնասէր թեթևութիւնով աշխատում է հրապուրիչ կերպով զարդարուած այր մարդոց առաջը դուրս գալ, որ աչքի ընկնի ու դիւր գայ, իրաւունք է տալի նորանց իւր վերայ խիստ դատողութիւններ անելու։ Փչացած մարդոցն էլ, կարծես, հրաւիրում է, որ իւր վերայ նայեն իբրև մի փչացած կնոջ վերայ։ Ա՛յդպիսի կինը թուլնաւորում է իւր արտաքին երևոյթի զեղխութիւնովն անմեղների, կամ՝ իրանց մտքից չար բան անց չկացնողների սիրտն ու ծնում է ուրիշի անկումն ու կորուստը, որուն պատճառ ու մասնակից լինելը իւր կողմից չէ կարծում։

Բայց ոչ միայն անպիտան նորաձևութեան խելքը միտքը տալն է պարկեշտութիւնը մեռցնող մեր մէջն, այլ և ո՞րպէս-որ-ինչ-ան-նելն, երբ ոչ ո՞րպէս ժամանակ անց կացնելն վրէ ո՞ ահմանից դո՞ւրս է գալիս ո՞ ոանձնապչակո՞ւնեան է գնում։

Այս պատճառով պատուաւոր մարդիկ իրանց զուարճութեանց տեսակն ընտրելու մէջ զգոյշ են։ Բարի հրեշտակը լաց է լինում՝ մեզ վերայ, երբ որ մեր սիրտն իրան տալիս է՝ առանց մոռածելու՝ թեթևամիտ զուարճութիւնների վերայ։ Ոչ թէ տխրութիւնն ու յուսահատութիւնն, ոչ թէ թշուառութիւնն ու աղքատութիւնն են անմեղութեան այնքան ամենավտանգաւոր թշնամին, որքան որ ուրախութիւնն և զուարճութիւնն, երբ որ մեր բոլոր զգայմունքներն արբեցնում է, չափ ու սահմանից հանում և մեր խելքը կորցնել տալի։ Այն տեղ, ուր չափաւորութեան հասած ուրախութեան մէջ փաղաքշանքն ու քծնելը մեր ունայնասիրութիւնը շարժում է, ուր որ չափից դուրս կերուխում մեր գլուխը սաքացնում է ու մեր զգայմունքը վերին աստիճանի լարում և մեր զգայականութեանը լիակատար իշխանութիւն տրվում, այնտեղ անհետանում են շատ անգամ մեր կեանքի ամենասուրբ կանոնները, ամենահաստատ բարոյական սկզբունքներն ու ամենասրնիւ իմացքն, որ ինքներս մեզ տուած ենք մեր վարքի ու բարքի մասին՝ իբրև մի ուխտ, որ պարտ ենք և պիտի կատարենք միշտ ամենայն սրբութեամբ։ Ա՛յդպիսի րոպէներում մարդս իրան ներում է ու թոյլ տալիս ամենայն հեշտութեամբ անել այն բանն, ինչից որ ուրիշ որ և իցէ ժամանակ զզուանքով երեսը պիտի շուռ տար և

վերջին աստիճանի ցած բան պիտի համարէր։ Քիչ է պատահել, որ շատ շատ մարգիկ անոանձ ուրախութեան մէջ իրանք իրանց կորցնելուց ու իրանց չափից դուրս գալուց յետոյ սաստիկ զըզջացել են ու դառն արտասուք թափել։

Մարդուս հոգին այդպիսի տեղ ինչպէս հեշտ կորցրել է իւր մաքրութիւնն, ինչպէս պատահել է շատ անգամ, որ սաստիկ յուզուած զգայականութիւնից, անմեղութիւնը կորցրել է իւր անգնահատելի արժանաւորութիւնն։

Ոչ թէ ուրախ ժամանակ անցկացնելն է հակառակ ճշմարիտ քրիստոնէական զգացմանց, այլ զգայականութեան կատաղի բերմանն անձնատուր լինելն՝ աչքը մութ կոխած։ Առաքինութիւնն արգելումէ մեզ՝ ոչ թէ պար գալը, կամ ուրախութեան մէջ իրմել մէկի ձեռքով մեզ առաջարկած մի բաժակ գինին, այլ՝ ուրախութիւն անելու ժամանակն՝ ինքն իրան այնտեղը հասցնելն, որ ոչ ինքն իւր պատիւը պահի, ոչ էլ ուրիշներից պահանջել կարողանայ, որ պատիւը պահեն։ Միանգամ որ մեզ այնքան տեղը կորցրեցինք, որ էլ մոիկ չտուինք թէ՝ ինչն է վայելուչն ու ինչն անվայել բանն և ամօթիածութեան ու պարկեշտութեան սահմանից դուրս եկանք, վիրաւորելով ու փչացնելով այդ մեր ազնիւ զգացմունքն։— պաշտպանուելու էլ ի՞նչ զէնք կունենայ այնուհետև անմեղութիւնն։

Կարելի է, որ այդպիսի դէպքերում դեռ և ես ամենևին պատահած չէ քեզ, որ մեղքի մէջ ընկնես, բայց անխոհեմ, վարուելուդ համար ինքդ քեզանից դժգոհ լինելդ, տարինեը անց կըկենայ, բայց էլի քեզ կտանջի։ Դու կզգաս, որ մի մարգարիտ քո վրայից ընկաւ, կորաւ, ու նորա նմանը մէկ էլ գտնել, գնել երբէք չես կարող։

Սոքա համարը պէտք է պրնա՜ն կենաս ո՜ հակէս ինչպէս էս վէրայ ա՜ելի այն ժամանակին, երբ որ ընկերական ղա՜պղծութեան ծէջոցին ծ՜ըսիծո՜ւն ասնէն այնպէս ծեզ պատպղո՜ւէ, որ ինչնեը ծեզ պաո՜ղնէ կորցնել, ւիչ է ծո՜ղ, որ խելք, ամօր, պատիւ ծեզ կողմը դնենէ ո՜ ծեր ասանձ կամէին հեռևեն։ ահա այդպէս պէտք է շատ զգոյշ ծատնէ, ո՜ րովհետև ղա՜պղծո՜ւթ՜ենց պրդեն պատրո՜ղնէ ո՜ պպատո՜ո՜ծ նա բացայայտապէս էշխել ծեր գեպակցո՜ւեան վէրայ։ Ոչ մի ժամանակ այնպէս խիստ պետք է չլինիս ինքդ դէպի քեզ, քան թէ այն միջոցին, երբ որ դրդռտող հանգամանքներն ամեն կողմից սաստիկ կեր-

պով ներգործուժեն քո զգայականութեանդ վերայ ու սպառնուժեն քո սրտումդ փոթորիկ հանել ու զգացմունքներդ տակն ու վերայ անել: Մահկանացու մարդս շատ թոյլ է այն ժամանակն միայն, երբ որ աշխարհումն ամենայն ինչ իւր աչքին վարդագոյն է երևում: Զախորդութիւնը մեզ առաւելապէս Աստուծոյ է մոտեցնում, մինչդեռ ուրախութիւնը շատ անգամ ամենից աւելի հեռացնում նորանից:

Անքաղաքական մարդոց հեթ նոթել՝ վէպ կենաց ամօրիտաքնեան կո՞ւռապն է, որովհետև մեր երեսից տանում է բոլորովին ամօթն ու պատկառանքը, մեռցնում մեր սրտի մէջ պարկեշտութեան զգացմունքը: Շատ օրինակներ տեսնելով անպարկեշտ ու անպատկառ մարդիկներից, անպատշաճ խօսքը՝ կամ գործն էլ մեզ այնչափ թուելի չի լինում, սովորական բան է դառնում մեզ համար և այդպէսով մեր քնքոյշ զգացմունքը բթանում: Շատ քիչ կպատահի, կամ աւելի լաւ է, որ ասենք թէ՝ քնաւ կարելի բան չէ, որ ամենևին չփչացած մարդը — , ինչ հասակի ու սեռի էլ լինի, զուարճութիւն գանի նիստ ու կաց անելուց այնպիսի մարդոց հետ, որոնք պատիւ ու պատկառանք ասած բանիդ վերայ արհամարհանքով են մոխիկ տալիս ու անազ անելով ծիծաղում: Եւ եթէ ստիպուած է նա այդպիսիների հետ ապրել, երկար ժամանակ նորանց անամօթութիւնն իրան սաստիկ ընդդէմ կթուի: Բայց ոչչափ երկար կքաշի:

Շատ անգամ մի անտեղի ու սուտ հպարտութիւն է գալիս նաև ազնիւ մտածող մարդու վերայ, նորան ճամբիցը հանում ու դըրդում, որ անվայել կատակներ ու զզուելի սրախօսութիւններ ինքն էլ անի. հօ կնիկ չէ՞, մարդ է, ասում է ինքնիրան: Այս ծուռ ու կեղծ հպարտութիւնը նորա մէջ զօրանում է ու իւր լաւ զգացմունքին յաղթում: Նա չէ ուզում անարգ մարդկանցից յետ մնալ, որ իրանից գերազանց են երևում իրանց անպատկառ ու երկաւ մտքի սուր խօսքերով: Նա չէ ուզում տանել ծաղրն այն անամօթ ու անպատիւ մարդոց, որոնց մարգատեղ չէ դնում: Նա նորանց ասած լիրբ խօսքերի տակը չէ ուզում մնալ, ինքն էլ կեղծում է նոյնն. և այսպէս ինչ որ ասում այն էլ լսում. դեռ նա ուզում է, որ նորանց անպատկառ ու անմիտ խօսքերից աւելի լաւերն ասի իրանց: Եւ այն, ինչ որ առաջն իրան ամենևին դիւր չէր գալի, կամաց կամաց իւր համար սովորութիւն է դառնում.

ինչ որ առաջ կեղծուիէր, ընութիւն է դառնում։

Այս տեսակ թեթեւամտութիւն են անում մանաւանդ պատանիները, որոնք որ զգում են թէ՝ իրանց դէմն ուրիշներից պակաս չէ և որոնք որ աշխարհք են դուրս գալի դեռ հաստատ սկզբունք չունենալով թէ՝ ինչ ճանապարհ պիտի ընտրեն իրանց կեանքի մէջ։ Բայց նորանց կողմից շատ անմիտ պատուասիրութեան զգացմունք է, որ ուզում են ցոյց տալ թէ՝ իրանց պատուին կպչել չեն թողնիլ, որովհետև այդպիսի անխելք պատուասիրութիւնը այն տեղն է տանում նորանց, որ ամօթը դէն դնելովն, իրանց բարքը փչացնում են, իրանց կապը կտրում, իրանց մարմինը թունաւորում, իրանց պատուական անունն ոտնակոխ անում, շատ անգամ իրանք իրանց խայտառակում իրանց բոլոր կեանքի մէջը։

Ով որ ամօթխածութիւնն՝ այս կախարդիչ առաքինութիւնը կորցրեց, փորձութեան ժամերում ամեն մի յանցանք գործելու ընդունակ է։ Անմեղութեան պաշտպան սուրը և ամուր ամբարտակը խախտուած է. հոգուց խլուած է իւր ամենազօրաւոր ղէնքը չարը գործելու հրապոյրի դէմ։ Այն ժամանակն որ տեսիլ պէտք է գտնենք այն յորդորողն ու խրատողն, որ մեզ համոզելով բանի, յետ քաշի ու չթողնի, որ խելքներս կորցրած վազենք ու ընկնենք կորստեան խորխորատը։

Ուրեմն ինձ համար միշտ սուրբ, միշտ պաշտելի լինի ամենիւ հոգացողութիւնս իմ պատուիս համար. միշտ սուրբ, միշտ պաշտելի լինի դժկամակող պատուական զգացմունքս այն ամենայն բանի դէմ, որ կարող է ինձ առաքինութիւնից հեռացնել։ Ով ամօթխածութիւն, գիւթիչ առաքինութիւն, երբէք իմ սրտիցս դուրս չգնաս. մինչև իմ գերեզման մտնելս իմ հոգուս մաքրութեան պահապանն, իմ սրտիս խաղաղութեան վահանն լինիր։

Եւ Դու, երկնաւոր Հայր, որ այս քնքոյշ զգացմունքն իմ սրտիս մէջը դրել ես, միշտ կենդանի և վառ պահիր իմ մէջս։ Ես ինձ այնպէս կպահեմ, որ ինձ համար աններելի համարեմ՝ կամ մաքիցս այնպիսի բան անցկացնել, կամ սրտիս թոյլ տալ այնպիսի մի զգացմունք, կամ մի այնպիսի հակումն ունենալ, որ դէպ ի քեզ նայելու ժամանակն իմ վերայ ստրոտի ու դող քցի։ Թէև մարդիկ չգիտեն էլ՝ թէ իմ սրտիս խորքումն ինչ է անց կենում. բայց Դու՝ ամենագէտ Տէր, Դու որ իմ երևակայած բաների գաղտնիքն էլ տեսնում ես. ինչու՞ Քո առաջդ պէտք է դեղ-

Նէի այնպէս, իբր թէ մուրթ գիշեր ու սև գերեզման է ծածկում ինձ։ Ո՞րտեղ թագնում՝, որ Դու ինձ չտեսնես։ Մի՞թէ մարդուս մտքից անցկացած բանն էլ արդէն գործ չէ, որ կարող է կատարուել։ Մի՞թէ մեր նուիրական անմեղութեան թանկագին մարգարիտն իւր արժէքն չէ՞ կորցնում, երբ որ մեր սրտում շարժումն այնպիսի անմաքուր ցանկութիւններ, որ բերան բերելն չե՞նք կարող ոչ մի ժամանակ։

Սուրբ Աստուած մի տանիր ինձի դէպի փորձութիւն, այլ փրկիր ինձ չարից։

(Թագ.) Գ. Ե. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑՈՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շարունակ. Ա բ բ ա թ, 1885 Ք. Ե.)։

ԳԼ. ԺԹ.

*Ս. Երուսաղէմի պատրիարքութիւնը սկսեալ Յակովբ Տեառն եղբօրից շարունակվում էր. պատրիարքը անխափ իշխում էր տեղւոյն բոլոր քրիստոնէից մինչև Քաղկեդոնի ժողովի յուզումները և մինչև որ երկաբնակութեան ու միաբնակութեան խնդիրը երկպառակելով քրիստոնէական եկեղեցու միութիւնը՝ յառաջացրեց այն հանգամանքը, որ Երուսաղէմայ յոյն եկեղեցին և ընդունելով Քաղկեդոնի ժողովը՝ սկսեց նեղել միւս քրիստոնէից՝ ընդ որս և Հայերին, ուստի և Հայք, յարմար առիթ ունելով Երուսաղէմի դուրս գալը Յունաց կայսերութիւնից և ընդ իշխանութեամբ մահմետականաց նուաճուելը, 637 թուին Երուսաղէմայ նուաճող Էօմէր Խաղդաբայի թոյլտուութեամբ ոմն Աբրահամ եպիսկոպոսի կարգեցին Հայոց առանձին պատրիարք անկախ միւս պատրիարքներից, և Հայոց պատրիարքի իրաւասութեան ենթարկուեցին Երուսաղէմի և շրջակայից Ատրի, Խլտի և Եթովպացի (Հաբէշ) եկեղեցականք և եկեղեցիք *)։ Արդէն Մուհամմէտ Ա. ամի-*

(*) Յաջորդ. Պատր. Երուսաղէմի. Բառնաբաս վարդապետի Գանձակեցւոյ, եր. 29—32. տպ. Կ. Պոլիս, 1871 թ.

բազեան հրովարտակով Ս. Յակոբեանց վանքը սրուած էր Հայոց, ուստի և Հայոց աւանձին պատրիարքական աթոռը հաստատուեց Ս. Յակոբեանց վանքում և ամիրապետների հրովարտակներով հետզհետէ որոշուեցին թէ, Երուսաղէմայ Սուրբ տեղեայ որը առանձնապէս պատկանում է Հայերին, և որը Հայոց ու այլ քրիստոնէից մասին:

Մահմետականք որպէս զի իրանց այլակրօն հպատակներին հեշտութեամբ կառավարեն, քրիստոնէից երկու մասն բաժանեցին, քաղկեդոնականների ներկայացուցիչ՝ Յունաց պատրիարքին կարգելով, իսկ ոչ քաղկեդոնականների ներկայացուցիչ՝ Հայոց պատրիարքին. և, առելութիւն ունենալով դէպի յոյները իբրև հակառակորդ պետութեան պատկանող ազգ, համեմատաբար աւելի դէպ ի Հայերն էին համակրութիւն տածում: ուստի և, համեմատաբար աւելի հեշտութեամբ էին վաւերացնում Հայոց ունեցած արտօնութեանց և ստացուածոց արտօնագրերը ու հարկաւորը տնօրինում:

Այս իսկ պատճառով է որ, Հայաստանեայց եկեղեցական վարչութիւնը աւելի դիւրք ստացաւ. և որովհետև մահմետական պետութիւնը հոգևորական կազմակերպութիւն ունէր՝ Հայ եկեղեցական վարչութիւնը նախկին իրաւունքն ու շուքը եթէ ոչ ըստ իսկականին, գէթ ըստ երևութին վայելում էր, և Հայրապետներն ու այլ եկեղեցականք ըստ իրաքանչիւր աստիճանի կարողանում էին ամբողջ բռնակալ իշխողների սիրտը, ժողովրդի թշուառութեան ժամանակ խնամակալ Հայր և բարերար հանդիսանալով. իսկ այս բանը ոչ սակաւ նպաստում էր ժողովրդին կապուել եկեղեցու հետ և իւր փրկութիւնը յուսալ եկեղեցուց՝ եկեղեցականների ձեռքով:

Որչափ որ մահմետական իշխողք կարևոր նշանակութիւն էին տալիս եկեղեցուն և Հայրապետներին՝ այնչափ և յունական պետութիւնը աշխատում էր նուաստացնել և քանդել այն բարոյական և նիւթական կապը, որ Հայրապետի ընտրական սկզբունքի շնորհիւ կար ազգի և եկեղեցու մէջ, ինչպէս տեսանուեց միութեան առթիւ Կիւր—Մանուէլ կայսեր առաջարկութիւններից, որով պահանջում էր նա, բայց եկեղեցու ազգայնութիւնը պահելուց՝ Հայրապետի առաջարկութիւնն էլ թողուլ ի կամս կայսեր, ցոյնք այն յաւակնութիւնն էլ սատ ումէին, որ չընդունելով Հայրապե-

ոի ազատ պատրիարքական իրաւունքները իւր եկեղեցու վերաբերութեամբ, իբրև շնորհ կամենուէին յատկացնել Նորան Անտիոքայ պատրիարքի տիտղոսը. մինչդեռ Հայ եկեղեցին ունենալով իւր անկախ դիրքը, ներկայացուցիչն էր, նաև ոչ — քաղկեդոնական այլ եկեղեցեաց։

1186 *թուէն սկսեալ Ասորւոց կաթուղիկոսն ևս մտել էր Հայ եկեղեցու իրաւասութեան տակ։ Իսկ այս դէպքը պատահեց ըստ այմ՝ ոմն Թէոդորոս Բարվեհերան իբրև Հակաթոռ Ասորւոց Միքայէլ կաթուղիկոսի, կաթուղիկոսացաւ Ցովհաննէս անուամբ. Միքայէլ ժողովով գահընկէց արեց Նորան և մի մենաստանում՝ արգելեց, որտեղից Թէոդորոս Բարվեհերան փախաւ Կիլիկիա, ուր և Լեւոնի ձեռքով հաստատուեց Կիլիկիայի Ասորւոց կաթուղիկոս, և այսպէս սովորութիւն դարձաւ, որ Ասորի կաթուղիկոսները իրանց հաստատութեան իրաւունքը Հայերից էին ընդունում՝։*

Հայ Հայրապետների ազդեցիկ դիրք ունենալը հատկացել էին և Հռոմայ քահանայապետները. որոնք խաչակրաց արշաւանքների ժամանակ կարիք ունենալով օգտուել այդ ազդեցութիւնից, տալիս էին զանազան պարգևներ և պատուոյնշաններ, որոց պէտք չունէր Հայ Հայրապետը. և այսպէս, իրանք կարիք ունենալով Հայ Հայրապետի օգնութեանը մի և նոյն ժամանակ դիմում էին Նորան և Նորա խնամոցը յանձնուած եկեղեցին անկախութիւնից դրկել և իրանց գերիշխանութեան տակ առնել, յատկացնելով Նորան Պապ պետէնց տիտղոսը (*)։

Կիլիկիայի Հայրապետանոցը իւր գլուխ ունենալով ընտրելագոյն Հայրապետներ անգամ շնորհած ցունաց առաջարկութիւններից ու սպառնալիքներից և Հռոմայ հրապոյրներից՝ գժգոհդարար միամտաբար հմայուած էր միութեան խնդրով, և աշխատում էին գլուխ բերել, բայց բարեբաղդաբար այս բանի կորոստաբեր հետևանքը զգալով Բուն — Հայաստանցիք, սկսեցին բողոքել և միութեան խնդրին հակառակ վինուել։ Թէպէտ Գրիգոր

(*) *Ցաւալի է որ յայտնի և գնահատելի պատմաբան Հանգ. Միք. Զամչեան իւր եռահատոր պատմութեան մէջ Հայ Հայրապետանոցի և Հռոմայ միջև յարաբերութեան մի նշոյլ նկատում է թէ ոչ, յայտնացնում է թէ Հայ Հայրապետը Պատակութեան (ինչո՞ւ) և սիրոյ Թուղթ ուղարկեց պապին։*

տղայի և Լամբրոնացու գրութիւնները ընդդէմ Հայաստանցւոյ առ ժամանակ մի թուլամեն ընթերցողներին, սակայն երէկ նոցա պաշտպանած միւթեան խնդիրը իրագործուէր, առաջ կըգար այն դաւալի հետեւանքը, որ Հայաստանեայցս եկեղեցին կըկորցներ իւր անկախութիւնն ու ազգայնութիւնը, որ եկեղեցւոյ հիմունքն են։

Հռոմկլայի Բ. Ժողովից յետոյ գեռ շարունակվումէին հակառակ միմեանց գրութիւններն ու բանակցութիւնները Հռոմկլայի հայրապետանոցի և Բուն—Հայաստանցւոց միջև՝ վախճանուեց Գրիգոր Դ. Տղայ։ Հայաստանցիք և Լևոն Բ. իշխան կասկածելով թէ մի գուցէ կաթուղիկոս ընտրուի Ներսէս Լամբրոնացի՝ որ ատեւլի էր դարձել իւր չափազանց հակամիաութեամբն դէպ ի միութիւն և օտարասիրութիւն, յօժարեցին Գրիգոր Տղայի եղբօր կամ քրոջ որդի Գրիգորին մանուկ հասակում կարգել կաթուղիկոս։ Այս բանին հակառակ էր Ներսէս Լամբրոնացի, որի հակառակութիւնը աւելի և ևս կասկածելի էր դարձնում նորան՝ թէ նա ինքն է կամենում կաթուղիկոսանալ։ Մանկահասակ Գրիգոր 1193 թուին օծուելով Գրիգոր Ե. կոչուեց և 16 ամիս հազիւ կարողացաւ վարել իւր իշխանութիւնը, որովհետև անարժան իւր կոչման ու աստիճանին վարմունքով աւելի եղաւ բոլորին, և Լևոն Բ. հոգևորական և աշխարհական երևելեաց որոշմամբ արգելեց նորան Կոպիտաւ բերդում՝ և մինչ Բուն—Հայաստանցւոց և այլոց ընդ որս և Լամբրոնացուն հրաւէր ուղարկելուց յետոյ սպասումէր որ գան Սիս և Ժողովով անօրինեն մինչ որ հարկաւորն էր, Գրիգոր Ե. կամենալով փախչել, կտաւից պարան էր շինել, մի ծայրը պարսպից և միւս ծայրը մէջքին կապելով կամացուկ վայր իջնելիս՝ պարանը կտրուել և ինքն գայթի ի գլոր վայր ընկնելով վախճանել էր, և թաղուել Դրազարկում՝ ուստի և Դահավէժ կամ Քարավէժ մականունն էր ստացել։

Հրաւիրեալքն լսելով Գրիգոր Ե. Դահավէժի եղեկելի մահը սգացին և յետոյ հաճութեամբ Լևոն Բ. իշխանի 1195 թուին շնորհալու Շահան եղբօր Ապիրատ որգուն ընտրեցին կաթուղիկոս, որ օծուելով՝ Գրիգոր Զ. կոչուեց։

Բուն-Հայաստանցիք կասկածելով որ Ներսէս Լամբրոնացու աշխատութեամբ է յաջողել Գրիգոր Զ.ի ընտրութիւնը, և տես-

նելով որ Դրիգոր Զ. հակաձէտ է դէպի միութեան խնդիրը, Բարսեղ Անեցուն կարգեցին լրանց կաթուղիկոս, որ մինչև իւր մահը իբրև հակաթոռ մնաց։

Ա յս ներքին խռովութեան ժամանակ 1197 թուին պատահեց նաև ծռազատիկը, որ մեծ շփոթութեան պատճառ դարձաւ։ Վիրք և Յոյնք սկսեցին նեղել իրանց իշխանութեան տակ եղած հայերին ստիպելով իրանց հետ տօնել Զատիկը։ Ատելութիւնը այն աստիճան աստակացաւ, որ Վրացիք մի հայ եկեղեցի քառասուն ժողովրդով այրեցին, թէև յետոյ պարտաւորուեցին ծանր տուգանք վճարել հայերի արդարացի զայրոյթը հանդարտեցնելու համար։ Յոյնք և չարամիտ քանսարկութեամբ Հայաստանեայց եկեղեցին կաթուղիկայ մօտ հերետիկոս հռչակելովն չբաւականացած՝ սկսեցին չարաչար տանջել իրանց իշխանութեան տակ եղած հայերին. նեղում և հալածում էին մայրենի եկեղեցուց չընդունողներին, իսկ թուլամիտ վատերին, եթէ աշխարհական էին՝ նորից մկրտում էին, իսկ եթէ հոգևորական՝ մրկրտում ու ձեռնադրում։

Հալածանքը այն աստիճան տաստիկ էր, որ Դրիգոր Զ. և Լևոն իշխանապետ պարտաւորուեցին Ներսէս Լամբրոնացուն կ. Պոլիս պատգամաւոր ուղարկել, խնդրելով վախճան տալ հալածանացը։ Լամբրոնացին տեսնելով իւր պատգամաւորութեան ապարդիւն անցնելը, և յունական տեսլութեան ու հալածանքի և ս քան զևս տաստկանալը, ամօթահար յօգուտ միութեան այնքան ջանքերի և դէպի յոյներն ու յատինեներն այնքան համակրութեան համար, վերադարձաւ ի սիրտ և ի հոգի վշտացած։

Յոյնք հայ եկեղեցու սրբութիւնները ծաղրելով չբաւականացած չարամիտ նենգութեամբ հռչակում էին թէ, որովհետև ըստ տեսլեան Սահակ Պարթևի վերջացած է Հայոց քահանայապետութիւնը, պէտք է անշուշտ նորից մկրտել և ձեռնադրել որոց հարկն է։ Ներսէս Լամբրոնացին ըստ իմպրոյ անտիոքացի յունադաւան ոմն Ոսկան կրօնաւորի հերքելով ցունաց այսպիսի անհեթեթ բանսարկութիւնները, և յայտնելով որ Սահակ Պարթևի տեսլեքը վերաբերում լուսաւորչի ցեղից քահանայապետութեան վերջանալն և ոչ Հայոց ազգի միջից, ապացուցանում էր Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութիւնը՝ չարաչար գանգատելով յունաց վարմունքից։

Յունաց այս հալածանքի ժամանակ Հռոմմայ պապն Լև տուիթ ունենալով Լևոնի խնդիրը և գերմանացւոց Հենրիկոս Զ. կայսեր հարկեցուցիչ պատուէրը, Մոգունտիոյ արքեպիսկոպոս և Կարդինալ Կոնդրատի ձեռքով ուղարկեց արքայական թագ և կայսեր արծուենշան դրօշը, առաջարկելով միանգամայն ա. բոլոր ոծները լատինաց հետ ոծնել, բ. ձրագալուցին պահքը չը լուծանել և գ. եկեղեցական պաշտամունքը կատարել ժողովրդի ներկայութեամբ։ Պապի դեսպանը դեռ չը յանձնած թագը և կայսեր ուղարկած արծուենշան դրօշը՝ առաջ սկսեց յիշեալ երեք առաջարկութեանց վերայ և երբ Լևոնի ծոխտմանէ հարկին կաթուղիկոսի հետ բերանացի հաւանութիւն տուեց նա չըբաւականացած՝ գոնէ 12 եպիսկոպոսների ստորագրութեամբ հաւանութեան թուղթ պահանջեց. Լևոն Սիս հրաւիրելով Գրիգոր Զ. Ապիրատին և ժողովակ կազմելով՝ միայն պապի և նորա դեսպանի սիրտը շահելու համար տուեց պահանջած հաւանութեան թուղթ ստորագրած կաթուղիկոսից և 12 եպիսկոպոսներից՝ որոնց մէջ էր և Լամբրոնացին, Այնուհետև Լևոն իշխան Տարսոն հրաւիրեց արևելեան և արևմտեան Հայոց երևելի իշխաններին և հոգևորականներին և նոցա ու լատին և յոյն նշանաւոր անձանց ներկայութեամբ 1198 թուին, Աստուածայայտնութեան օրը, Յունվարի 6 ին Գրիգոր Զ-ի ձեռքով թագաւոր օծուեց. իսկ հանդէսը աւելի և ս շքեղ կացուցանելու համար ներսէս Լամբրոնացին առենաբանեց։ Յունաց կայսրն և ս, լսելով Լևոնի թագաւոր օծուելը, թագ ուղարկեց յորդորելով իւր ուղարկածը գործածել և ոչ լատինացուցը։

Լևոնի հանդիսաւոր օծման լուրի հետ Բուն—Հայաստանցիք յատկապէս Զորագետացիք և Շիրակացիք իրանց ներկայացուցիչներից լսեցին և պապի առաջարկութեան հաւանութիւնն ի կողմանէ Հայրապետանոցի. սաստիկ վրդովուեցին, մանաւանդ լսելով որ Լամբրոնացին իւր յայտնի օտարամոլութեամբ արգէն գործադրում է։ Բուն—Հայաստանցիք Լամբրոնացուն համարելով գլխաւոր պատճառ նորահնութեանց, բողոքեցին Լևոնին, որ սկսուեց պատուիրել Լամբրոնացուն ձեռք վեր առնել նորահնութիւնից ու օտարամոլութիւնից, սպառնալով հակառակ դէպքում զրկել եպիսկոպոսութեան աստիճանից։ Լամբրոնացին մի պատասխանով առ Լևոն արդարացնելով իւր վարմունքը և

օտարասիրութիւնը, չարաչար յարձակվումէ արևելեան Հայոց վերայ, և նոյն իսկ 1198 թուին մի անգամ քարոզելիս՝ հիւանդանումէ և տակաւ ժամանակից յետոյ 45 տարեկան հասակում վախճանում և թաղվում Սկևռայ վանքում՝ իւր հայրենի Լամբրոն գղեակին մօտ:

Անհիմն չէր արևելեայց կասկածը Լամբրոնացու վերաբերութեամբ, վասն զի Լամբրոնի իշխանները թէպէտ հայ ազգաւ, բայց թշնամութիւն էին տածում դէպ ի Ռուբինեան իշխանութիւնը և ի վնաս ազգի միշտ ձեռնտու էին յունաց և յունականութեան: Այսպէս, երբ Լևոն Բ. թագաւոր գնացել էր Կիպրոս իւր անելին տեսութեան, Լամբրոնի իշխան և Լամբրոնացու եղբարք Հեթում՝ և Կոստանդին իրանց կողմը շահելով հայ իշխաններից ոմանց՝ ապստամբեցրին նորա դէմ. Լևոն չկամենալով զուր արիւն թափել, խոստացաւ իւր Ռուբէն եղբօր կրտսեր աղջիկը տալ Հեթումի Օշին որդուն կնութեան, այսպէս բարեկամութեան պատրուակով կալանաւորեց Հեթումին և Կոստանդնին, նոցա ձեռքից առաւ Լամբրոն և Պապերոն գղեակները, որոնք իրանց ամրութեամբ Լամբրոնի իշխանների ձեռքին ծառայում էին հայկական իշխանութեան քայքայմանը որպէս մի կեր-ցաւ և այսպէս վերջ տուեց Լամբրոնի հակապետական իշխանութեան: Գրիգոր Զ. լսելով իւր ազգական Լամբրոնի իշխանների կալանաւորութիւնը, շտապեց Հռոմկլայից Սիս հասնել, և Լևոն Բ. զիջանելով հայրապետի թախանձանացը, արձակեց կալանաւորեալ իշխաններին Սսում բնակութեան տեղ տալով:

Գրիգոր Զ. Ապիրատ Սիս գնալու տարին 1202 թուին Սսոյ շրջակայքում՝ Արքայկաղնի կոչուած վանքում բնակութիւն հաստատած լինելով, այնտեղ և վախճանեց եօթնամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ:

Գրիգոր Ապիրատի օրով նշանաւոր էին Գրիգոր վարդապետ Սկևռացի՝ որ գրեց Գրիգոր Նարեկացու և Լամբրոնացու կեանքը, Ցէլուենական տօնից վերայ ճառեր, Յովհաննու Մկրտչի Արեգական արդարութեան» շարականը, Եսայեայ մարգարէութեան մեկնութիւնը ևլն: Երևելի էր և Անուշ կաթուղիկէի երէց Մխիթար Անեցի, որի երկասիրութեանց մէջ նշանաւոր էր Հայոց, Վրաց և Պարսից պատմութիւնը:

Հայք նկատելով Կիլիկիայի Կաթուղիկոսարանի օտարամոլ նորաձևութեանց հետամուտ լինելը, ընդ ակամբ էին նայում դէպի այն, ուստի և Գրիգոր Ջ. Ապիրատի մահից յետոյ, Արևելեայք պարձեալ Բարսեղ Անեցուն ցանկացան հաստատել, և մինչ Կիլիկեցիք հաճութեամբ Լևոն Բ. Թագաւորի արքայական ատեանի Սուր եպիսկոպոս մեծանձնութեամբ և մեծահոգութեամբ հռչակեալ Յովհաննէսին էին կաթուղիկոսացնում Յովհաննէս Ե. անուամբ, Փոքր — Հայք և Պետրոս Գետադարձի ապգական Սեբաստիոյ Անանիա եպիսկոպոսին ընտրեցին կաթուղիկոս, համարելով թէ, Յովհաննէս Ե-ի կաթուղիկոսութիւնը ազգի ընտրութեամբ չէ, այլ Թագաւորի ստիպմամբ։

Սակաւ ժամանակից յետոյ Լևոն Թագաւորի և Յովհաննէս Ե-ի միջև գժտութիւն ընկաւ և Լևոն կաթուղիկոսին գահընկէց անելուց վատ հետևանք կատկածելով, Սսում մի քանի եպիսկոպոսների և վարդապետների հաւանութեամբ Դաւիթ Գ-ին կարգեց կաթուղիկոս, և այսպիսով մի և նոյն ժամանակ հինգ կաթուղիկոսներ եղան մէկը՝ Սսում, մէկը Աղթամարում, մէկը Սեբաստիայում, մէկը Անիում և մէկը Հռոմկլայում. որոնք միմեանց հակառակ իշխանութիւն վարել սքնելով՝ ժողովրդի անդորրութիւնը վրդովում էին ըստ հոգևորին զանազան մեան բաժանելով և ազգի մէջ նեղութին հրիպատակութեան ու ատելութեան հուր բորբոքելով. թէև իսկ ամենուակալ համաթվումբ Հռոմկլայինը։

Եկեղեցական վարչութեան այս պատահմեալ ժամանակին մի նոր խնդիր ևս յուզուեց։ Բագրատունեաց հարստութեան անկումից յետոյ շատ Հայք էին գաղթել Վրաստան, ապաւինելով նոցա՝ իբրև քրիստոնեայ պետութեան։ Վրացիք սկսեցին բռնանալ այս հայերի վերայ պահանջելով եկեղեցական պաշտամունքը ըստ վրացւոց կատարել և Վրաց եկեղեցու սովորութեան հետևել։ Այս ժամանակ Վրաստանում մեծ պաշտօններ էին վարում Զաքարէ Սպասալար և իւր Իւանէ Ամիրսէգ եղբայրը, որոնք պարտաւորեալ Վրաց պահանջմունքներից՝ գրով յանուն Լևոն Թագաւորի և Յովհաննէս Ե. կաթուղիկոսի (չիմանալով թէ Սսում Դաւիթն է վարում կաթուղիկոսութիւն) խնդրեցին Թոյլ տալ բանակում՝ վրանի մէջ շարժական սեղանով պատարագել և Ս. Աստուածածնի Վերափոխման ու Ս. Խաչի վերացման տօնը Վրաց հետ տօնել։ Լևոն Բ. Թագաւոր հրաւիրելով շրջակայից

նշանաւոր հոգեւորականներին՝ 1204 թուին նախագահութեամբ Դաւիթ Գ. կաթուղիկոսի Սսոյ Ա. ժողովը գումարեց, ուր և սահմանուեցին ութ կանոններ, որոնք մեծամեծ շփոթութեանց պատճառ դառնալով և մեծ մասամբ անգործադրելի մնալով, որովհետև այդ ժողովը ոչ թէ սահմանուած էր եկեղեցւոյ համար, այլ Զաքարէի պահանջմանը օրինաւորութիւն տալու համար։ Երբ Լևոն Բ. թագաւորն ու Դաւիթ կաթուղիկոսը առանձին դեսպանութեամբ ժողովի վճիռը ուղարկումէին արևելք, Յովհաննէս Ե. կաթուղիկոսն ևս Հռոմկլայից 4 քահանաների, քաղցրանուագ պաշտօնեաների ուղեկցութեամբ ընծայ ուղարկեց ամն Մխնաս Եպիսկոպոսի հետ մի եկեղեցանման վրան, մարմարիոնեայ սեղան, պատարագի և եկեղեցական սպասներ։

Զաքարէ Լոռիում ստանալով Սսոյ ժողովի վճիռը և Յովհաննէս կաթուղիկոսի ուղարկած սուրբ պատարագի վերաբերեալ սպասները գործադրելու համար 1205 թուին Լոռւոյ Ա. ժողովը գումարեց։ Ժողովի մէջ ի միջի այլոց նշանաւոր էին Զաքարէի ազգական Հայրապետ եպիսկոպոս Գրիգոր Տուտէորդի՝ Մայրենի եկեղեցւոյ աւանդութեանց նախանձախնդրութեամբ, և Հաղարծնոյ վանահայր Տարօնեցի Խաչատուր վարդապետ ու Գեղակայ վանահայր Մխիթար Գօշ, իրանց հմտութեամբ։ Ժողովը անհամաձայնութեամբ լուծուեց և Զաքարէ մի կողմից հալածելով հակառակորդներին՝ մյուս կողմից սկսեց գործադրել Սսոյ ժողովի վճիռը։ Եւ առաջին հանդիսաւոր պատարագին՝ Խաչատուր Տարօնեցի, որ հմուտ էր երաժշտութեան՝ երգեց ցայսօր պատարագի զգեստաւորելուն յատկացեալ «Խորհուրդ խորին» երգը։

Ոչ Զաքարէի իշխանական սասոն ու բռնութիւն և ոչ Խաչատուր վարդապետի ու Մխիթար Գօշի միջնորդութիւնները չը կարողացան ամոքել հակառակորդներին։ Եւ Յովհաննէս կաթուղիկոսի ընծայաբեր Մխնաս եպիսկոպոս, որ Զաքարէից ուղարկուած էր Հաղբատ համոզելու, տեղւոյն վանականներից չարաչար արտաքսուեց։ Գրիգոր Տուգէորդի Զաքարէի վրէժխնդրութիւնից ազատուելու համար տպաւիրեց Մխիթար Գօշին՝ բայց հուսկ ուրեմն, բանդարկուեց Կեչառուաց սահմաններում։

Զաքարէ այս խռովութեանց և շփոթութեանց վախճան տալու համար 1207 թուին Անւոյ Դ. ժողովը գումարից, որ պարձեալ շփոթութեամբ լուծուեց։ Շփոթութեան և խռովութեան պատ-

հառն էր Զաքարէի բանի ստիպմունքը ան պատճառ ընդունել տալ Սոյ ժողովի որոշումները. իսկ իշխանութիւնը ամէնի և ոտտիկա-
ցաւ, երբ Մխիթար Գօշ ծերութեան պատճառով ժողովին չըգալուց և ժողովի Հարց որոշմանը իւր համախոհ լինելը յայտնելուց յետոյ, երբ ժողովականների ստիպողական հրաւիրմամբ պարտաւորեալ եղաւ գալ Անի ժողովներին մասնակցելու առանց Զաքարէի հետ տեսնուելու, միայն ժողովականաց հետ նախատպէս տեսնուելով, Մխիթար Գօշ Անի հասած ին պէս, գնաց ձիուց չիջած՝ Զաքարէ տարաւ իւր ազարանքը, ըստ իւր կամաց նորան թելադրելու համար: ժողովականք երբ այս լսեցան, սկսեցին խռովութիւն յարուցանել. իսկ Զաքարէ բանի առաջարեց իւր կամքը, ամենց հալածելով, ամենց քանտարկելով և ամենց չարաչար պատուհասելով:

Այս խռովութիւնները եթէ մի լաւ հետևանք ունեցան այս այն էր, որ արևելեայց և կիլիկեցւոց միջև յարաբերութիւնը սկսեց վերակենդանութիւն առանալ. վախճանած լինելով Անւոյ Բարսեղը, Սերաստիոյ Անանիան և Սոյ Դաւիթը, օրինաւոր աթոռակալ մնացել էր Հռոմկլայի Յովհաննէս կաթուղիկոսը, որ հաշտուած լինելով Լևոն թագաւորի հետ, արդէն 1206 թուին Սիս էր տեղափոխուել իբրև երկրորդ Աթոռ կաթուղիկոսութեան:

Լևոն թագաւոր, որ քրիստոնէական եղբայրսիրութեամբ մուտք էր տուել կաթոլիկ իշխաններին ու լատին հոգևորականներին նոցա ապերախտութիւնն ու աներնտութիւնը տեսնելով սաստիկ գայրացած՝ բոլորին ևս արտաքսեց Կիլիկիայից, և պատկ բոլոր ջանքը մեռմել Լևոնի բարկութիւնը, զուր անցան, որովհետև Լևոն բնաւ երբէք կամեցաւ ընդունել կաթոլիկներին, թէպէտ և նոքա յետոյ գազանաբար մուտք գտան:

Լևոն 34 ամեայ իշխանութիւնից յետոյ 1219 թուին վախճանեց, որին Յովհաննէս կաթուղիկոսի և իշխանների հաւանութեամբ յաջորդեց իւր զուստր Զաբէլ թագուհի, 1220 թուին վախճանեց նաև Յովհաննէս Ե. կաթուղիկոս, որ իւր մեծահոգութեան և արքայասիրել վարմանց համար Մեծաքարոզ է վերակոչվում. Յովհաննէս Մեծաքարոզ թագուհոց Հռոմկլայում:

ՍՏՈՑ Ա. ԺՈՂՈՎ *),

Ա. Պատարագը մատուցանել սարկաւագներով զպիրներով և քահանայական զգեստներով, ինչպէս որ մեր ազգի մէջ առաջ սովորութիւն էր և ինչպէս վայել է ամենայն քրիստոնէից։

Բ. Բանակի մէջ, վր ինով լացօթեայ շարժական սեղանի վերայ պատարագ մատուցանելու հրաման ունենալ։

Գ. Ոչ միայն ննջեցելոց, այլ և կենդանեաց համար պատարագ մատուցանել։

Դ. Վրաց և Ցունաց երկրումը Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը Օգոստոսի 15 ին և Ս. Խաչի տօնը Սեպտեմբերի 14 ին տօնել, ո՛ր օրը և պատահի։

Ե. Աստուածայայտնութեան և Զատկի ճրագալոյցներին պահել մինչև երեկոյ, և երեկոյեանը՝ միայն ձկով և ձիթով լուծել։

Զ. Ցարգել Փրկչի և ամեն սրբերի պատկերները։

Է. Դպիր չը ձեռնադրած՝ սարկաւագ չը ձեռնադրել։

Ը. Կրօնաւորները առանձին ստացուածք չունենան վանքերումը միաբան մնան և միս չուտեն։

(Շարունակելի) Յ. Վ. Մ.

(*) Ժողովոց պատմ. Ա.բել Ա.ըքեպիսկոպոսի գլ. Լե. երես 119. իսկ ըստ Կիրակոսի պատմագրի Գանձակեցւոյ՝ երես 98 — 99. տպ. ի Մոսկ. 1858 ամի.

Ա. Սուրբ պատարագը մատուցանել ինչպէս օրէնն է, գոլորով եւ սարկաւագով։

Բ. Ա.ետնման տօնը Ապրիլի 6 ին (7 ին) Սուրբ Ս.ստուածածնի Վերափոխման տօնը՝ Օգոստոսի 15 ին եւ Խաչի տօնը Սեպտեմբերի 14 ին տօնել, ո՛ր օրը եւ հան դիպի, այսպէս եւ այլ սրբոց տօները։

Գ. Ննդեան եւ Յարութեան ճրագալոյցը պահել մինչեւ երեկոյ եւ ձկով ու ձիթով լուծանել։

Դ. Ընդունել Փրկչի պատկերի եւ այլ սրբոց պատկերների նկարագրութիւնը, եւ չըխոտել նոցա ինչպէս հեթանոսաց պատկեր։

Ե. Կենդանեաց համար էլ պատարագ մատուցանել։

Զ. Կրօնաւորները միս չուտեն։

Է. Չեռնադրել դպիր, յետ ոչ սակաւ ժամանակաց՝ սարկաւագ եւ առա կատարելահասակ լինելուց յետոյ քահանայ։

Ը. Վանքերում միաբան մնալ. եւ առանձին ինչք չունենալ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԲԼՆ

ՊՐՕՖԵՍՈՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԷՔՍԻՐԻՆՆԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

(Շարունակ. Աբաբա. Ե. և.)

Քննելով ուշի մտօք հոգւոյ և մարմնոյ կապակցութեան ապացուցութիւններն, մեք հետզհետէ կհամոզիմք թէ գործարանն՝ որ ամենից աւելի սերտ կապուած է հոգւոյ հետ է ուղեղն։ Ընդ զանազան ժամանակս կընդունէին այլ գործարաններն իրրև կայարան հոգեկան գործունէութեան, սակայն այժմ նորա ի բաց թողուած են։ Թէպէտև ուղեղն է գլխաւոր գործարան հոգեկան գործողութեան, սակայն այլ գործարաններն ևս կմասնակցին նորան, գլխաւորաբար գործարանքն զգայութեանց մկանունքն և մեծապոյն փորոտիք կամ ընդերքը։

Առանձնակերպ կազմութիւնն ուղեղի կքննուի յետոյ։ Այժմ ես կընկատեմ միայն, որ թէ այդ է կարի մեծ և բարդ գործարան։ Հանակութիւնն արեան, որով նա առատապար կլցուի, է հինգերորդ մասն ամբող ջ քանակութեան արեան որ կգտնուի գործարանաց մէջն, հանգամանքներն կցուցանեն զօրել գործունէութիւն այդ գործարանի։ Փաստերն՝ որք կցուցանեն կապակցութիւն հոգւոյ և ուղեղի բազմաթիւ են և անհերքելիք։ Մեք կցուցանեմք նոցանից ոմանց վերայ արդէն յիշատակեալ երկու տեսակէտից՝ ուղեղային գործողութիւններն, որք կյուզեն հոգին, և հոգեկան գործողութիւնք՝ որք կյուզեն ուղեղն։ Ինչ որ կվերաբերի առաջին կարգին՝ այդ ամենեցուն յայտնի է որ հարուածն գլխոյ կարգելու և կդադարացնէ ժամանակաւորապէս ճանաչողութիւնն և մտածողութիւնն և եթէ հարուածն լինէր բաւականաչափ ուժով՝ երկար ժամանակ կխանգարէր մտաւորական ընդունակութիւնն կվնասէր յիշողականութեանն կամ կպատճառէր որևիցէ այլ կերպ հոգեկան խանգարումն։ Հարուածն նմանապէս կարէ բժշկել մտաւորական խանգարումն, եղել են յայտնի դէպքեր որ հարուածելով գլխոյն դադարեցուցել պակասամտութիւնն։

Տկարութեան բոլոր երևոյթներն և գժբաղդ դիպուածներն, որք կխանգարեն հոգեկան ընդունակութիւններն կներգործեն ջղային նիւթականութեան վերայ։ Նմանապէս դրգռեցուցիչ բժշկական դեղօրայքն (медикаменты) կներգործեն ջղոց վերայ։ Շատ օրինակներ թուլամտութեան կարելի է վերաբերել այն պատճառներին, որք կյուզեն ուղեղի անունդն։

Առաւել մտադիր և խորաքննին նկատողութիւնն ընախօսներիւ՝ անհերքելի ապացոյցին, որ ուղեղն իրրև մի ամբողջութիւն, անհրաժեշտ է մտաց, զգայութեանց և կամաց արտայայտութեանց համար, բաց յայնմանէ նորա զանազանեցին նորա (ուղեղի) առանձին մասանց գործողութիւնքն։

Ինչ որ կվերաբերի հոգեկան գործողութեանց՝ որք կ՚առաջացնեն փոփոխութիւն ուղեղի մէջ, մեք կարող եմք՝ յառաջ բերել շատ դիտողութիւններ սմին վերաբերեալք։

Ա՚յսպէս և մտաւորական չափազանց լարմունքից կամ գրգռմունքից յետոյ կնկատուի ջղային նիւթոյ նուազումն։ Լուսկիր—թթուածին (Фосфорнокислыя) մոխրաչրոյ՝ որք կբաժանին արիւնից երիկամունքներով կմտնեն նորա մէջ (այսինքն արեան մէջ) ուղեղից և ջղերից և նոցա քանակութիւնքն կըմնծանան զկնի գօրեղ մտաւորական լարման։

Ապաքէն սաստիկ գրգռմունքներն կլինին պատճառ անդամալուծութեան, որ է տկարութիւն ջղերի կամ ջղային կեդրօնաց՝ իսկապէս մճռողական նշանակութիւն ունին բազմաթիւ հետազօտութիւնքն խելագարների մասին։ Ի թիւս գլխաւոր պատճառաց խելագարութեան՝ մեք կնշմարեմք հոգեկան չափազանց լարմունքներն՝ զօրօրինակ՝ երկարժամանակեայ մտաւորական աշխատութիւն կամ յանկարծական հոգեկան ցնցմունքն առ հասարակ վըշտալի են և երբեմն ուրախալի։ Հոգեկան խանգարմանց հետ կլինի ուղեղի խանգարումն կան հիմնաւոր ապացոյցներ՝ խելագարների շատերի մէջ փոփոխութիւն ուղեղի պարզապէս կնկատուի։ Իբրև ապացոյց ես յառաջ կբերեմ գրքոյկն բժշկապետաց. I. B. Tuke'a և Rutherford «Տ՚եղեկ և Բ՚ոթե-ֆ՚ոթե» on Mordid appearances met with in the brains ofthirty insane persons. «Հիւանդութեան երևութից մասին՝ որք նկատել են երեսուն անձանց ուղեղների մէջ, որք կտառապէին խելացնորութիւնով»։ Հետազօտեալ ուղեղներն կպատկանին այն հիւանդներին՝ որք կմեռանէին մխիթարից յետևից և բնաւին չէին որոշուած որ և իցէ առանձին դասակարգի։ Նորա կպատկանէին այն հիւանդներին որք կտառապէին ընդհանուր կաթուածով խելագարութեամբ խառնուած կաթուածոյ հետ յարատև խելագարութեամբ և խելագարութեամբ որ խառնուած է վերնոտութեան հետ։ Այդ դիպուածներից իւրաքանչիւրոյ մէջ նկատուել է պարզաբար շեղումն կանոնաւոր կազմակերպութիւնից ուղեղի։ Հեղինակներն կթուեն իրեն տեսակ հիւանդութեան փոփոխութիւններ՝ որ յայտ բերուած են մանրադիտակի հետազօտութեամբ։ Այն դիպուածոց մէջ ուր չտեսնուի պարզ խանգարումն, չէր կարող հերքուիլ՝ վասն զի հնարաւոր փոփոխութիւնքն ուղեղային նիւթականութեան անմատչելի են աչաց։ Կընդունին թէ՝ յամենայն դէպս յայտնի հոգեկան խանգարման կայ և խանգարումն ուղեղի։

Շատ և շատ համոզիչ փաստեր կարելի է յառաջ բերել՝ վերաբերեալք կապակցութեան հոգեկան գործունէութեան ընդ քանակութեան և որպիսութեան արեան՝ որ կհոսի դէպ ուղեղն։ Ո՚չ մի գործարանն չներգործէ եթէ չունի արիւն։ Ուղեղի գործադրեալ արեան քանակութիւնն կիմոփոխուի համեմատ ընդարձակութեան և զօրութեան նորա գործողութեանց։

Երեան շրջանի խանգարելոյն կթուլանայ հոգեկան գործունէութիւնն՝ ինչ ժամանակն շնչերակաց արեան քանակութիւն՝ որ կմատակարարի ուղեղին՝ կբչանայ։ Ընդհանուր կորուստն արեան կնուազացնէ բոլոր կենսա-

կան գործունէութիւն նոյնպէս և հոգեկանն։ Ի միւս կողմանէ, երբ արիւնագարձութիւնն կերագէ ուղեղի մէջ՝ մոքերն կիփոխին աւելի արագապէս, յայտնութիւն կամաց հզօրագոյն է։ Հոգեկան մեծամեծ գրգռմունքներն միշտ կ՚առաջացնեն չափազանց հոսում արեան դէպ ուղեղն, որն յաճախ նըկատելի է յարտաքուստ անօթոց զարնուելովն։ Ցնդգի ժամանակն արիւնագարձութիւնն կհասնի չափազանց արագութեան։

Արիւնն պէտք ունենայ յայտնի որպիսութիւններ, այսինքն նորա մէջ ներկայ լինելու է մի յայտնի ինգրեդիէնտներ (ингредіентѣ *) և բացակայիլ միւսներին։ Առողջարար կերակուրն է առաջին պայման ղշային և հոգեկան գործունէութեան, նուազումն կամ քաղցածութիւն, թուլութիւն մարսողութեան, կարգելուն կանոնաւորութիւն հոգեկան գործողութեանց։

Արիւնն կարող է լինել խիստ առատ և հարուստ սննդարար նիւթերով, բայց ուղեղն կարող է լինել ճնշուած անչափ պահանջմունքներովն գործարանի միւս մասերին զորօրինակ մկանանց։

Մկանանց զօրող լարմանց ժամանակին, ընդունակութիւնն մտաւորական ջանից չափազանց սակաւ է։

Բացակայող նիւթերն են թոյներն և արտաթորութիւնք կամ կղկղանք (экскреты) նոյն իսկ մարմնոյն, զորս հեռացնելոյ համար զբաղած են քանի մի մեծագոյն փորոտիքներ։ Գլխաւորներն այդ արտաթորութեանց են ածխաթթուատն և մէզն, կուտակելն միոյ և միւսոյն արեան մէջ։ կճնշէ հոգեղոյ դրութիւն, կկորսընէ ճանաչողութիւնն և վերջապէս կկինի պատճառ մահուան։ Ըստ այսմ։ եւանդն հոգեկան գործունէութեան կախի այնչափ առող ջ դրութենէ արտադրող գործարանաց, թոքերի լեարդի, փորոտիքներ, երիկամունքներուի, կաշոյ՝ որչափ և սովորաբար սննդարար նիւթերից կերակրներից։

ԳԼՈՒԽ Գ։

ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՑ ԵՒ ՄԱՐՄՆՈՑ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԵՐԵՒ ԶՈՒԳԸՆԹԱՑ ԵՐԵՒՈՒԹԻՑ։

Կախումն միոյ երևութի միւսից կապացուցանի սովորաբար երկու փաստերով, նախ՝ ուր կայ պատճառ, կայ և հետևորդ, երկրորդ՝ ուր չկայ պատճառ չկայ և հետևորդ։ Այդպիսի եղանակաւ կապացուցանի թէ պատճառն ծիոյ է հուրն, իսկ թթուածինն է պատճառ փտելոյ։ Այդ երկու եղանակներից երկրորդն՝ այսինքն թէ բացակայութիւն պատճառի կբացակայացնէ հետևանքներն՝ է առաւել համոզողական։ Միսն հոտելուց կարելի է պահպանել եթէ օդոյ թափանցկութիւնն արգելուի, որ է պարզ ապացուցութիւն թէ՝ օդն կամ նորա մանրիկներից մին է պատճառ հոտելոյն։ Առաւել

(*) Առանձին բաղադրիչ մասն քիմիական միաւորութեան։

համոզականն է՝ եթէ յանկարծակէս կհեռանայ ենթադրեալ պատճառն, կհեռանայ նմանապէս և հետևանքն։

Կան սակայն դէպքեր, երբ մեք չեմք կարող հեռացնել յայտնի ներգործող պատճառն։ Մեք չեմք կարող աղտիլ երկրից, որոյ վերայ կբնակիմք։ Մեք չեմք կարող, յանկարծակի դադարելովն ձգողութեան լուսնի ապացուցանել թէ՝ ջեղումն և արտազեղումն մեծաւ մասամբ կախին աղբեցութիւնից լուսնոյ։

Ցայդպիսի դէպս կդիմեն դէպի երրորդ եղանակակերպն, որն կլուծէ դժուարութիւնն և կընձեռէ պահանջեալ ապացուցութիւնքն։ Եթէ այդ ներգործող պատճառն թէև չէ կարելի հեռացնել, սակայն կարող է ենթարկել հետզհետէ փոփոխութիւնների, որն կարելի է չափել, ուրեմն մեք կարեմք դիտել թէ՝ արդեօք չհամապատասխանին այդ փոփոխութեանց համանման փոփոխութիւնք հետևանաց ուժոց, եթէ մեք կգտնեմք խիստ զուգընթացութիւն ուժոց պատճառի և հետևանաց, ուրեմն այդ իսկ է հաւանականն և դրական ապացոյց։ Այդպիսի միջոցաւ մեք կճանաչեմք, որ ջեղումն և արտազեղումն կախին միևնոյն ժամանակ լուսինէն և արեգակէն ինչպէս որ լուծական և գազանման հեղանիւթոց դրութիւնն կախին ջերմութիւնից ևլն։

Ա յսպիսի խնդրոց մէջ՝ ինչպէս է կապակցութիւնն հոգւոյ և մարմնոյ, պատճառն հեռացնելու ըօրեղ եղանակը չէ կարելի յարմարացնել։ Մեք կարող չեմք լուծել քիմիական միջոցաւ մարդն ի հոգի և ի մարմին։ Մեք կարող չեմք հեռացնել հոգին, որպէս զի նկատելի լինի թէ արդեօք կանհետանայ մարմինն։ Մեք կարող եմք ոչնչացնել մարմինն, բայց չեմք կարող ասել, արդեօք այդ դէպս կանհետանայ հոգին թէ ո՛չ, վասն զի իսկապէս սրանով կմերժեմք յայտարարն հոգւոյ։ այսինքն նորա մարմնական արտայայտութիւնները։ Ա յդ ամէնը միևնոյն է, թէ ցանկալով ապացուցանել իրա. կանութիւն մագնիսական զօրութեան՝ մի կողմն դնէինք նոյն իսկ մագնիսն։

Նմանապէս եղանակ բացակայութեան չէ կարելի յարմարեցնել առ գլխաւոր գործարանն հոգեկան գործունէութեան, այսինքն առ ուղեղն։ Հեռացումն ուղեղի արդարև կպատճառէ հոգւոյ արտայայտութիւնների դադարումն, սակայն ի բաց առնելով ամենատորին կենդանիներն, այն հեռացումն կյառաջացնէ և դադարումն մարմնական կենաց։ Կարելի է հասնել ամենակարևոր հետևանաց հեռացնելով ուղեղն մասն առ մասն, որից և կարելի է եզրակացնել թէ՝ հնարաւոր է ուրեմն և իսպառ հեռացնել ուղեղն։ Ահա այս կերպիւ մեք ևս առաւել կարող եմք մեծարնալ կատարեալ ձևոյն փորձառական ապացուցութեան։

Բայց եղանակ զոքընթացութեան կամ համապատասխանող փոփոխութեանց, ըոլորովին յարմարացնել կարելի է ի ներկայ դէպս։ Մեք կարող եմք դիտել աստիճան առ աստիճան փոփոխութիւնն ուղեղի և ջղային համակարգութեան ամենայն կենդանեաց մէջ և բաղդատել նորան մեծաւոր ուժոց հետզհետէ փոփոխութեան հետ։ Արդէն բաւական ժամանակ անցել են այն

օրից, երբ գանգաբանք (խդրագիմայք) դարձուցին ընդհանուր ուշադրութիւն կապակցութեան վերայ, որ կայ ուղեղի մեծութեան և մարդոյ մտաւորական զարգացման մէջ։ Նցուցանէին տարբեր հակապատկերն գլխոց պակասամներուն և այն մարդիկներուն որք կգերազանցէին իւրեանց թէ մտաւորական ընդունակութիւններովն և թէ բնաւորութեան մեծագոյն եռանդեամբ։ Այդ կանոնն ա՛չ այնքան խիստ կպահպանի, երբեմն յիմար մարդն առաւել մեծ ուղեղ ունի քան խելացին։ Բայց այդ միայն անհատական բացառութիւններ են։ Ընդարձակ վիճակագրական դիտողութիւններն կցուցանեն, թէ՝ մտաւորական գերազանցութիւն ունեցող մարդոյ առհասարակ ուղեղն սովորականէն առաւել մեծ է։

Ահա աղիւսակն կշռոց ուղեղի ոմանց ականաւոր անձանց։

Կիւվիէ	64·5	ունկի (унція *)
Դօկտոր Աբերկրօմբի . . .	63	»
Դանիէլ ուէբստեր . . .	53·5	»
Լօրդ կէպմբէլլ	53·5	»
Դէ Մօրգան	52·75	»
Գաուս	52·6	»

Միջին կշիռն ուղեղի Եւրոպացի այր մարդկան 49·5 ունկի է, կանանց 44 ունկի (Quain Anatomy 7 изд. 571 с.) պակասամներուն մէջ գտնուեցան ուղեղներ որք կկշռէին 27 ունկի, 25·75, 22, 5, 19·75, 18·25, 15, 13 և 8·5։

Ըստ ասութեան Դօկտոր Տիւրնամա (Dr. Thurnam'a Journal for Mental science за 1866) միջին կշիռն ուղեղի խելայնորների՝ 2·5% ստորէ միջին կշռից առողջ մարդոյ։ Զուգընթացութիւնն ընդ մէջ քանակութեան ջղային համակարգութեան և մտաւորական ուժոյ բաւական ապացուցած է մեր հետազօտութեան նպատակի համար։ Այդ զուգընթացութիւնն չէ այնքան ճիշտ նորա համար, որ ջղային համակարգութիւնն բացի պարզ հոգևոր գործողութիւններից, ունի և այլ գործողութիւններ։ Մի և նմի շարժումն մկանաց կպահանջէ մեծագանակ ջղային ոյժեր և կենդանիներն ամենամեծ և ուժեղ մկանաց հետ ունին համապատասխանող նորան մեծ ուղեղ։ Ուստի ամենամեծ ուղեղն մեր կգտնենք ա՛չ թէ մարդոյ մէջ, այլ փղի և կէտ ձկան մէջ, որոց ահագին մեծութիւնքն կպահանջեն մեծածախս վատնումն մկանական ուժոց։ Փղի ուղեղն կկշռէ 8 կն 9·10 ն անգղիական ֆունտ։ Կետոս ձկան ուղեղն 5 կն 9·8 ն անգղ. ֆունտ։ Մէկի ուղեղն՝ որոյ երկարութիւն էր 9·75 ֆունտ կշռեց 7 անգղիական ֆունտ։ Դօկտոր Սթրուտեր գտաւ, որ ուղեղն մանուկ կիտոսի, որոյ երկարութիւն էր 9·14·5 ֆ. կշռեց 3 ֆունտ 12 ունցի, բայց ուղեղն նարվագայ ձկան՝ որոյ երկարութիւն էր 9·17 ֆուտ, կշռեց 3 ֆունտ 14·75 ունցի։ Բայց մկանունքների շարժողութիւնից մեծ մասն ջղային ուժոց ի

*) Մին երկտասան մասանց չափուշ կշռոց, դեղատան մէջ ունցիա կբաղկացնէ 1/12 մասն ֆունտի։

գործ կղնեն կենաց գործողութիւնքն պահպանելոյ համար, այսինքն՝ մարսողութեան, շնչառութեան, արիւնագարձութեան և այլն։ Սորա ամենալաւ ապացուցութիւն է այն, որ այդ ամենայն գործողութիւնքն բաւականաչափ կթուլանան, երբ ջղային ոյժն կկեդրօնանայ մեաւորական կամ մկանական ուժգնութեան վերայ։

Գտել են, որ բարձրահասակ մարդիկներն ըստ մեծի մասին ունին մեծ ուղեղ, քան թէ փոքրահասակներն։

Համեմատելով աճեցումն ուղեղի մեաւորական ուժոյ աճեցման հետ, մեք կնկատեմք, որ այդ աճեցումներն կկատարին ոչ համահաւասարապէս միմեանց, առհասարակ արականի ուղեղն կկշռէ 48 ունցի։ Ուղեղներն տարօրինակ մարդկան սակաւ անգամ կհաւասարին Կիւվիէի ուղեղի կշռոյն այսինքն 64 ունցի։ Մինչդեռ սովորական մարդոյ մեաւորական ոյժն համեմատելով Կիւվիէի մեաւորական ուժոյ հետ, առաւել սակաւ է քան 48 64։ Եթէ մեք կդարձնեմք ուշադրութիւն միայն չիշողութեան վերայ՝ իբրև բանականութեան հիման վերայ, սովորական մարդն չէ կարող ըմբռնել չիշողականութենէն մէջ երրորդական կամ չորրորդական, գուցէ անգամ մեծասանեւորդականն այն կուտակումն առարկաների, զորս կպարունակէր Կիւվիէի չիշողականութիւն։ Այդ եղրակացութիւնն կարելի է անել, համեմատելով կենդանիների մարդկան հետ։ Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ երբ քանակութիւնն ուղեղի կաճի գրեթէ թուաբանական յառաջադիմութեամբ, մեծաւորական ոյժերն կաճեն երկրաչափական յառաջադիմութեամբ։

Նս առաւել կարևոր և հրահանգիչ համեմատութիւն կնկատի ջղային համակարգութեան (система) գործողութեան ձևոյ մէջ։ Ընդելով արմատական տարբերութեան բնական և հոգեկան գործունէութեան, մեք զարմանալով կտեսնեմք, թէ ի՞նչպէս անձուկ կապուած են քանի մի հանգամանք միոյն՝ միւսոյ համապատասխանող հանգամանաց հետ։ Որպէս զի հասկանալի անել այդ, մեզ պէտք ձգել առանձին հայեացք՝ ջղային համակարգութեան ձևոյ կամ կազմութեան վերայ։

Անտարակոյս մեզ համար ամենալաւ հնարքն բացատրելոյ կազմակերպութիւնն ջղային համակարգութեան է, եթէ սկսենք արտաքին նշաններից։ Ամենէգուն յայտնի է գոյութիւնն գործարանաց զգացման և շարժման, և իւրաքանչիւր ոք կարող է թուել բազմաթիւ ամենաչնչին մանրամասնութիւններն, որք կվերաբերին գործարանաց այդ երկու դասակարգերին։ Քննութիւնն այդ հանրածանօթ փաստերին կարող է պարզել քանի մի ամենակարևոր կէտեր կազմութեան ջղային համակարգութեան։

Գործարաններն զգացմանց, որք սովորաբար կհաշուին հինգ, փոքր ի շատէ հանրածանօթ են։ գործարանն շօշափելոյ է ամբող ջ ծածկոյթն մարմնոյ, այսինքն մորթն։ Մնացեալներն սահմանափակուած են որոշեալ մասերուն մարմնոյ։

Գործարան զգացմանց ասելով կհասկանամք այն մասն մարմնոյ, որ կնթարկուելով յայտնի ազդեցութեան տակ և իդէպս գրգռման՝ տպաւորու-

թիւն կալգէ հոգւոյն։ Գործարանն իւրաքանչիւր զգացման կազմուած է ազդեցութիւնների յատուկ դասու համար, գործարանն շօշափելեաց՝ կարծր հպաւորութեանց համար, գործարանն լսելեաց՝ օդային մասնիկների հարուածոց համար, գործարանն ճաշակելեաց՝ հեղուկների կամ լոյծ նիւթոց համար, ոյք ունին յայտնի քիմիական յատկութիւններ, գործարանն հոտոտելեաց՝ գազանման (газообразныхъ) ցնդմանց կամ գոլորշեաց համար, գործարանն տեսանելեաց՝ արեգական ճառագայթից կամ որ և իցէ այլ լուսատու մարմնոց համար։

Ընդհանուր գործարանքն ամբողջ մարմնոյ մասերն են՝ գլուխ երես, աչք բերան կոկորդ պարանոց թիկնամէջ ձեռք ոտք և այլն։ Այդ գործարաններից իւրաքանչիւրն կկրէ բազմաթիւ փոփոխական դրութիւններ այն ևս շատ ու քիչ արագութեամբ և շարունակութեամբ։ Համարեա թէ այդ ամենայն շարժողութիւնքն տեսանելի են աչաց. բայց նոյն իսկ գործիքներն շարժման անտեսանելի են աչաց սակայն հեշտութեամբ կարելի է բանալ հատանելով սոյն գործիքները։ Կարմիր միսն՝ որ կանուանի մկանական հիւսուածք՝ է նրբաթել նիւթ, որն կկազմակերպէ առանձին կուտակներ զանազան ձևերի և մեծութեան, սակայն ունին մի ընդհանուր յատկութիւն այն է՝ կարճելու։

Մկանունքի երկու ծայրերն ամրապնդած են ոսկրների կամ այլ մասանց հետ և կարճեցնելով մկանունքն կմոտենան միմեանց այդ ամրացուցման կէտերն և այսպէս կկատարեն շարժումներ, որն մեք կտեսնեմք։ Ինքերի վերայի լայն և հարթ մկանունքն, ամրապնդուած են մի ծայրիւ գանգի հետ և միւս ծայրիւ ներքին ծնոտի հետ։ Ծամելոյ միջոցին կարճեցնելով մկանունքն կսեղմէ ծնոտներն։ Այդ սեղմումն կկատարի յայտնի զօրութեամբ համեմատ մկանունքների երկարութեան, և այլ հանգամանքների։ Մեծ մկանունքներն առաջնակողման ազդեր, այնպէս դասաւորուած են ոյք կուղղեն ծալած ծնկերն։ Մարդկային ձեռաց բազմաթիւ շարժումներն համաթիւ մկանունքներ կպահանջեն։ Մարդկային մարմնոյ մէջ կհաշուի բոլորն 400 էն 500 մկանունքներ։

Հետևաբար մեղ պէտք է քննել փոխադարձ յարաբերութիւնքն այդ երկոտս գործարանների, այսինքն զգացմանց գործարանների և շարժմանց գործարանների։ Որևիցէ մի բան պէտք է ներգործէ զգացմանց գործարանի վերայ, որպէս զի մեք ընդունէին ք տպաւորութիւն, և մի բան պէտք է ներգործէ շարժման գործարանի կամ մկանանց վերայ, որպէս զի յատուկ շարժումն։ Ըստ ինքեանց թէ միսն և թէ միսն անգործք են և անշարժք։ Զգացմանց գործարանների ընդունելուիչ պատճառն կլինի սովորաբար յայտնապէս, զոր օրինակ կպչելն մարմնոյ կարծր մարմնոյ հետ, պատառն դէպի բերան տանելով, հոտաւէտ առարկաներ քթին մօտացնելով։ Ա՛չ այնքան պարզ են շարժման ներքին պատճառներն։

Մեք դիտեմք շատ օրինակներ, ուր կայ գրգռումն զգացման գործարանի, ըստ երևութի միևնոյն ժամանակ կայ և գրգռումն շարժման գործա

բանի։ Ճանկարծադէպ երևումն լուսոյ կտիպէ մեզ իսկոյն յետս դառնալ որպէս զի նայիլ նորան։ Լեզուի վերայի պատառն կպատճառէ ծամելոյ բոլոր շարժումներն։ Խորաքննեմք ուշադրութեամբ այդ փաստերն։ Իմ ձեռքս անշարժ դրուած է սեղանի վերայ, որևիցէ մի բան՝ անգամ երբ թեթև կերպիւ կկպչի նորան, զոր օրինակ ճանճ կամ փետրիկ մի, իսկոյն շարժման գրգռումն կերևի որոշեալ մկանունքների մէջ և ես կվերցնեմ ձեռքս։ Ենթադրելով, որ այդ երկու երևոյթներն հետաւոր պատճառական կապակցութիւն ունին, որ թեթև տպաւորութիւնն է պատճառ, իսկ շարժումն՝ հետևանք, որպիսի միջնորդական շղթայող կապ կարող ենք ենթադրել։ Եթէ այդ գործողութիւնն չէ՛ բոլորովին տարօրինակ երևոյթ, ուրեմն պէտք է լինի կապ ձեռաց մօրթոյ ուսոյ և նախաուսոյ մկանունքների մէջն, որք կմիանան նորա համար, որպէս զի ձեռքն յետս քաշեն։ Ենթադրեմք, որ տանեակ մկանունք կմասնակցին այդ շարժմունքին, ուրեմն պէտք է լինի հաղորդակցութիւն կաշոյ իւրաքանչիւր կէտի և այդ տանեակ մկանունքի իւրաքանչիւրոյ մէջն։ Եթէ ինչևիցէ համանման երևոյթ պատահէր ոտին և նա շարժուէր, ապա ուրեմն՝ ոտին կաշոյ սկաւառակի (тазъ) ազդեր (бедра) և ոլոդան (голень) մկանունքի մէջ պէտք է լինին հաղորդակցութեան գծեր, երբ այդ մասերն կմասնակցեն ոտին շարժմանը։

Ա՛յժմ՝ ենթադրեմք, թէ փոխանակ թեթև հպաւորութեան, մեք ուժով կտտեմք ձեռքի մէնոյն տեղն։ Նախընթաց դէպքն ցոյց տուեց թէ իրօք կայ կապ ձեռաց կաշոյ և ուսոյ և ձեռաց բազմաթիւ մկանունքի մէջ և մեք կսպասեմք համանման հետևանաց, սակայն գուցէ լինի առաւել ուժգին։

Մեր ակընկալութիւններն կկատարին, այդ իսկ խումբն մկանունքների կշարժի և կգործէ առաւել ևս եռանդեամբ, ձեռքն առաւել ևս արագութեամբ յետ կքարշէ։ Բայց մեք կտեսնեմք, որ այդ տակաւին բոլորն չէ։ Մի ձեռքի շարժմանց հետ կմիանան այլ շարժմունք միւս ձեռքին, ոտից, իրանաց (туловище) և երեսի, բացի այլ առաւել ծածկեալ շարժմունքից, որք կարտայայտեն ձայնով իրրև աղաղակ կամ ձայնարկութիւն։ Մեք կտեսնեմք, որ ձեռաց կաշոյ իւրաքանչիւր մասն կարելի է համարել կապուած 200 մկանունքի հետ, վասն որոյ պէտք է նկատել թէ թոյլ հպաւորութիւնն չպատճառէ հետաւոր շարժմունք։ Ճամենայն դէպս այդ փաստ է, որ կցուցանէ չափազանց բազմաթիւ և լարդ հաղորդակցութիւնն կաշոյ այդ մասին և շարժման գործարանաց մէջ։ Գործն կկնճռի, եթէ մեք կշարունակեմք մեր քննադատութիւն սովորական փաստերով։ Մեք կընկատեմք, որ կտտելով որևիցէ մասն կաշոյ, ձեռաց, ոտից, թիւնամիջի, կուենեմք համանման հետևանք, այնպէս որ իւրաքանչիւր մասն մարմնոյ ծածկութի կհաղորդի չափազանց մեծ թուով մկանունքի հետ։ Ապաքէն կատարելով նոյնպիսի փորձ այլ զգացմանց գործարանաց վերայ, մեք կունենամք նոյն իսկ հետևանքներն։ Թոյլ գրգռումն կպատճառէ սահմանաւոր շար-

ժումն՝ զօրեղ դրգռումն՝ բազմաթիւ շարժմունք նոյնանման են ընդհանուր առմամբ շարժմունքն, որք կ՚յառաջանան կաշոյ կտտելուց։ Ամենադառն ճաշակն՝ ղզուելի հոտն՝ թափանձախոյթ անդուշնակ հնչմունքն՝ փայլուն խտտիչ լոյսն կպատճառեն շարժումն անդամոց՝ իրանի՝ երեսոյ և ձայնակապերի։ Զգացման գործարաններից իւրաքանչիւրն ունի նոյնանման ընդարձակ կապակցութիւներ շարժման գործարանաց հետ՝ ինչպէս և կաշին։

Զգացմանց գործարանների գրգռման գործողութիւնն չսահմանափակի մկանունքների մի խմբի վայրկենական ոարսափելովն կամ դողալովն՝ շատ անգամ կ՚յառաջանան ամբողջ շարք շարժմունքի և դրութեանց՝ որ ևս առաւել կըարդէ կենձռէ գործե և կցուցանէ հաղորդակցութիւնն՝ շարժման նոյն իսկ գործարանաց մէջ։ Ձեռին ծալելոյն՝ կ՚հետևի նորա ուղղելն՝ ծնօտից ծամելոյն կ՚հետևի նոցա կողմնական մանրեցուցիչ շարժումն։ Հետևողական շարժմունք չեն կարող լինել առանց որոշեալ կապակցութեան ընդմէջ իւրաքանչիւր շարժման և հետևորդաց նորա։ ընթանալն և թռչելն հնարաւորք են միմիայն այն ժամանակ երբ երկու հետևողական շարժմունքն կապուած են միմեանց հետ։

Ձկայ կարևորութիւն լսորասուղիլ բարդ հաղորդակցութիւնների այս համակարգութեան մէջ՝ որպիսի հաղորդակցութիւններն կան շարժման և զգացմանց գործարանաց մէջ և շարժման գործարանաց զանազան դասուց մէջ՝ իսկ այդ համակարգութիւնն կենթադրէ հարիւրաւոր և հազարաւոր կապակցող թելեր։ Մի բան միայն կարող եմք եզրակացնել տեսնելով՝ թէ որևիցէ գործողութեան կարգաւորաբար կ՚հետևի միւսն՝ մեք կենթադրեմք՝ որ նոցա մէջ կայ յայտնի կապ։ Ցայս ներկայ դէպս ինչ բանի մէջ նա չկայանայ՝ մեք նախապէս չեմք կարող իմանալ՝ մինչև չդիտեմք մարմնոյ ներսն։ Ա՚յնտեղ դիտելով՝ մեք կդտնեմք բազմաթիւ արծաթափայլ թելեր տարբեր հաստութեամբ՝ որք կ՚յայտնի կերդօններից կտարածուին դէպի մարմնոյ բոլոր մասերն իբրև որոց դէպի մկանունքն և զգացմանց գործարաններն։ Սոքա են նեարդք ջիղք։ Կերդոնն՝ որից կարտադրին՝ կնմանի իբրև մի մեծ գնդակի՝ բաղկացեալ գլխաւորաբար դոյն իսկ արծաթագոյն սպիտակ նիւթից՝ ինչպէս և ջղերն՝ որք իբրև բոլորակաձև զանգուած՝ կլցնէ սկաւառակն գանկի և իբրև երկար և տափարակ շերտի ցկէս ըմբաչափ տրամագծի կշարունակի ողնաշարի սեան մէջ։ Զանգուածն՝ որ կլցնէ սկաւառակն գանկի՝ կանուանի ուղեղ գլխոյ՝ բայց շերտն՝ որ կլցուցանէ ողնաշարի սիւնն՝ կանուանի ուղեղ թիկնամիջի։ Իսկ այն բազմաթիւ կապակցող թելերն՝ որոց համար վերևն խօսեցինք՝ են ջղեր։

Թէպէտև ուղեղն կկազմուի գլխաւորաբար նոյն իսկ նիւթից ինչպէս և ջղերն՝ սակայն՝ բաց յայնմանէ նա ունի իւր մէջ դարձեալ այլ տեսակ նիւթ։ Ա՚յդ նիւթն այլ կերպ ներկած է՝ նա մխրոյ պէս գորշագոյն է՝ ինչպէս այդ կարելի է տեսնել մարդոյ կամ կենդանեաց գլխոյ կամ մէջքի ուղեղոյ հատուածոյ վերայ։ Ա՚յդ արտաքին տարբերիչ նշաններով հնարա-

ւոր է մեզ հետաքննել կարգաբաժանումն երկու նիւթոց և նոցա փոխադարձ յարաբերութիւնն։ Մարդոյ և կատարելագոյն կենդանեաց ուղեղների մէջ մեք կգտնեմք երևելի դասաւորութիւն մակերևութի ի ձև գլանակի և ակօսագծի, որք կանուանին ֆալդո-ածք (извилына — convolutions) և կտրածին զանազան կողմեր։ Այդ գալարուն մակերևոյթն կբաղկանայ դրշագոյն նիւթոց բարակ և հաւասարաչափ ծալերից (слой) մինչդեռ ներքին գանգուածն կբաղկանայ ջղային սպիտակ նիւթից։

Ցատկութիւնքն այդ երկու բաղադրական մասանց ուսումնասիրած է կատարելապէս, այնպէս զի՝ նոցանից իւրաքանչիւրոյ նշանակութիւնն շատ ու քիչ յայտնի է կամ գէթ հաւանական է։

Մանրադիտակաւ կտեսնուի թէ սպիտակ նիւթն՝ որ կկազմէ ջղերն և մեծ մասն կեդրօնաց կբաղկանայ նրբաթելից կամ շատ բարակ թելերից, որոց արձակներն (փունջ) կբաղկացնեն ջղերն։ Գորշագոյն նիւթն կբաղկանայ նոյն իսկ նրբաթելերից խառն առանձին բաղադրութեան հետ, որ կոչին ջղային կամ հանգուցանման ցանցաձև վանդակներ, փոքրիկ, կարծր, բոլորակ, տանձաձև կամ անուղիղ մարմիններ որք ունին ճիւղեր, ջղային թելերից հետ միաւորութեան համար։ Այդ երկու տարերքն, այսինքն նրբաթելերն և վանդակներն, ի միասին նոցա շրջապատող թաղանթների և արիւնատարձ անօթոց հետ՝ որ կանուանի միաւորեցուցիչ ոստայն, կձևացնեն ինչպէս կեդրօներ, նմանապէս և ճիւղատարածումն ջղոց։

Առաջին նշանաւոր յատկութիւնն այդ ջղային տարերց նոցա մեծութիւնն է։ Ինչպէս վանդակներն նմանապէս նրբաթելերն չափազանց փոքր են, ջղային նրբաթելեր կան թանձրութեամբ $\frac{1}{1500}$ ից $\frac{1}{12000}$ բմաչափ, միջին թուով ց $\frac{1}{6000}$ բմաչափ։ Մեք կտարբերեմք երկու տեսակ նրբաթելեր, ամենակարևոր «սպիտակ» կամ «գլանական» նրբաթելերն կբաղկանան 1) անկազմելի (безструктурной) արտաքին փաթութիւից կամ թաղանթից։ 2) ճարպային նիւթոյ ծալքերից, 3) կեդրոնական թելերից կամ՝ գլանակից, որ կբաղկանայ ա՛չ ճարպից, այլ սպիտակուցից։ Այդ կեդրօնական «առնաձև գլանն» է իսկապէս ներգործող մասն նրբաթելերի և ջղային երկուց ծայրից վերայ, նա մերկացած է իւր փաթութիւից կամ թաղանթից։ Նորա թանձրութիւնն չէ աւելի քան $\frac{1}{100000}$ բմաչափ։

(թարգմ.) Ս. Ե. Մ.

(Շարունակելի)

ԱՋԳԱՅԻՆ

1882 թ. Դեկտ. 6 էն ի վեր «Ընտրատ» ի նշան սգոյ սեւ շրջանակով էր պատած, ինչպէս և Ազգիս Հայրապետական գահն ու գաւազանը՝ սեւ քօղով, վասն զի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին զրկուած էր իւր Հովուից երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսի մահուամբ. այժմ ցնծութեամբ վերցնում է իւր սեւ շրջանակը, բազդ ունենալով աւետել իւր ընթերցողաց որ, յաջողութեամբ Տեառն, տարւոյս Ապրիլ ամսում կատարուած ընտրութիւնից յետոյ, ոլորմած բարեհաճութեամբ Աստուածափառ Կայսերն ամենայն Ռուսաց ԱԼԵՔՍԱՆԴՐ Գ-ի հաստատեցաւ ի Գահ Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Արքեպիսկոպոս՝ Առաջնորդն Նոր—Նախիջևանի և Ռեստարաբիոյ ի յաջորդութիւն Ս. Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և սքանչելի Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի։

Այս մասին ամսոյս 22 ին Ս. Էջմիածնի Սինօդն ստացաւ Կովկասու Քաղաքական Մասի Վրէսաւոր Գառավարչապետի գրութիւնն համարաւ 8099 ի 14 ամսոյս, որով յայտնում էր, թագաւոր Կայսրը անցեալ Յուլիսի 18 ին բարձրագոյնս բարեհաճեցաւ հաստատել ՄԿՐՏԻՉ Արքեպիսկոպոսին յաստիճան Վեհափառ Պատրիարքի — Կաթուղիկոսութեան Ս. Էջմիածնի և

Հայկազեան ազգի. և թէ, Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրն այժմէն իսկ բարեհաճելով յայտնել Նորին Սրբութեան բարձրագոյն հաստատութեան մասին, հրաւիրումէ ուղևորել դէպի Ս. Էջմիածին, ուր և դէպի Ռուսաց գահը հաւատարմութեան համար երդուելուց յետոյ, ըստ ծիսի Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. օծումն ընդունել, իսկ հաստատութեան հրովարտակն յանձնել Նորին Սրբութեան երբ կը ժամանէ Վոլկասու սահմանը։

Նորին Կայսերական Մեծութիւն ամենողորմածաբար շնորհել է Նորին Սրբութեան ՄԵԿՈՒՐ կաթուղիկոսի ամենայն Հայոց Վ. եղարի ադամանդեայ խաչ և Սուրբ Էջ. քսանդր Նևսկւոյ ասպետական Նշան։

Ռուսի Սինոդն իսկոյն փութաց հեռագրով յայտնել Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդաց, ի Տաճկաստան՝ Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքին և Պարսկաստանի ու Հնդկաստանի և Ղորպատականի Հայոց առաջնորդաց, ամսոյս 25 ին կիւրակէ օրը Հանդիսաւոր Ս. Պատարագի մէջ յիշատակել Նորահաստատ Վ. եղ. կաթուղիկոսի Ընտունը. իսկ Էջմիածնում՝ նոյն րոպէին ի ձայն ցնծութեան որոտացին Մայր Տաճարի բոլոր զանգակները աւետելով նոր Հայրապետի հաստատութիւնը։

Ես՝ առաջնորդաց ուղղած հեռագրի պատճէնը։

ԱՒ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՑՆ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՑ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒ ՏՓԽԵԱՑ, ՇԱՄԱԽԻՈՑ, ԱՍՏՐԱԽԱՆԱՑ. ՆՐԵՒԱՆՍՑ, ԿԱՐՈՒՑ ԵՒ Դ.ԱՐԱԲԱՂՈՒ

Ա.յսօր ստացեալ եղև պաշտօնական յայտարարութիւն թէ, հաստատեաց Թագաւոր Կայսրն զՄակար Արքեպիսկոպոսն ի կոչումն պատրիարքի Հայկականս ազին. ուստի և Սիւնհօդս առաջարկէ Ձեզ յառաջնում կիւրակէի զաստուածայինն մատուցանել զպատարագ և ըստ կարգին սահմանելոյ՝ յիշատակել զանուն Նորին Վեհափառութեան և շրջաբերականաւ ծանուցանել զայսմանէ հաստատութեանդ՝ որք ստորագրին Կոնսիստորիայիդ ի պատճաշական կատարումն:

—

ԿԱՌԱՎԱՐՉԻ ԹԵՄԻՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԵՒ ՎԻՃԱԿԱԽՈՐԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ

Ի 22 ամսոյս ստացեալ եղև պաշտօնական տեղեկութիւն թէ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ հաստատեաց զԱրքեպիսկոպոս Մակար յաստիճան Պատրիարք կաթուղիկոսի ամենայն Հայոց. վասն որոյ Սիւնհօդս առաջադրէ Ձեզ յառաջնում կիւրակէի կատարել զգոհացողական Պատարագ և սահմանեալ կարգաւ յիշատակել զանուն Նորին Վեհափառութեան և շրջաբերականաւ հրատարակել զայսմանէ ի գիտութիւն ընդ տեսչութեամբ Ձերով գտեալ հոգևորականաց և ժողովրդականաց վասն պատշաճականն կատարման:

—

ԱՒ ՊԱՏՐԻԱՐՔՆ ՀԱՅՈՑ Կ. ՊՕԼԻՍՈՑ

Պաշտօնական գրութիւն Կառավարութեան տեղեակս առնէ, թի Օգոստափառ Կայսրն ռուսաց բարեհաճեալ է յերկուց ընտրելոց (կանդիտատ) հաստատել՝ ի գահ կաթուղիկոսութեան ամենայն Հայոց զՏէր Մակար Արքեպիսկոպոս

(առաջնորդն Բեսարաբիոյ)· զորմէ Սինհօդս յարգանօք յայտնէ Ամենապատուութեան Ձերում՝ և Ձեօք համայն ազգային մերոյ Տաճկաստանեայց· զորմէ սաստկիք և զգուշութիւն առանձին ի Սինհոդէ։

Տեղակալ Աստենապետի Սինհոդի·

Սինհոդն ի դիմաց իւր և միաբանութեան Ս· Էջմիածնի հեռագրով շնորհաւորեց Նորին սրբութեան Հաստատութիւն ի գահ կաթուղիկոսութեան Նախամեծար Հրաբատեան Մայր Աթոռոյ և ամենայն Հայոց, ըստ այսմ·

22 Սեպտեմբեր 1885 ամի . Ռիշնէ·

ԾԱՌԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՄԱԿԱՐԱՑ·

Ցետ ընթեռնուլոյ զտառագեալն այսօր պաշտօնական յայտարարութիւն վասն հաստատութեան յՕգոստափառ Թագաւոր Կայսերէ զՁեզ ի կոչման Կաթուղիկոսի Հայկազեան տեառն, զանգահարութիւն Մայր եկեղեցւոյ Ծանոյց զայս առեալս Միաբանիցս Սրբոյ Աթոռոյս՝ Սինհոդ և Միաբանութիւնն ուրախալի և անկեղծ պարտաւորութիւն անձին համարի շնորհաւորել Զեզ զհամբառնալն Ձեր ի գահ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և առաջի սեղանոյ Իջման Որդւոյն Միածնի վերառաքել ղՁերմագին աղօթս առ Ամենաթարթափեալ Արարիչն, զի կազդուրեսցէ Տէր զղօրութիւնս Ձեր առ ի արդարացուցանել զլոյսն եղեալ ի վերայ Ձեր Ազգիս Հայոց և Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ։

Տեղակալ Աստենապետի Սինհոդի ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ·

Անդամք Սինհդի՝
ՄԵՍՐՈՊ Ե. ՊԻՍԿՈՊՈՍ
ՅՈՎԱԿԻՄ Ե. ՊԻՍԿՈՊՈՍ
ԵՐԵՄԻԱ Ե. ՊԻՍԿՈՊՈՍ
ՆԵՐՍԷՍ Ե. ՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՄԲՐԷ Վ. ԱՐԴԱՊԵՏ

Նորին Վեհափառութիւն ընդունելով սոյն հեռագիրն բարեհաճեց յայտնել իւր շնորհակալութիւնն յանուն Ամենապատիւ Տեղակալ Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոսի։

ՏԵՂԱԿԱԼԻ ԱՏԵՆԱՊԵՏԻ ՍԻՆՕԴԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

Նուիրեմ Ձեզ և բոլոր Անդամոց Սինօդի, նոյնպէս և Միաբանութեան Էջմիածնի վիմս սրտագին շնորհակալութիւն և օրհնեմ զամենեսեան։ Զբաղանդակեալ ի հեռագրի արտայայտութիւնս ջերմեռանդն զգացմանց, խորին յարգանաց և որպիսական հաւատարմութեան համարիմ ես ճշմարիտ առհաւատչեայ ապագայ ծաղկման Մայր Աթոռոյ և բարեկեցութեան Անդամոց Միաբանութեան Նորին, զորոց ղջերմագին աղօթս լսիցէ Ամենակարողն Աստուած և օգնեսցէ ինձ արդարացուցանել ղյոյս և ղյանկութիւն ամենեցուն յօգուտ սիրելի Աղգիս և Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ։

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՄԱԿԱՐ.

Պիտակէ ամսոյս 25ին Գեր. Տ. Եղեմիա եպիսկոպոս անդամ Սինօդի և առաջ լուսարար Մայր տաճարի պատուարգից Էջմ. սեղանոյ վերայ, և յիշատակութեան պահուն մօտեցաւ սեղանի վերայ դրուած Հայրապետական սպասպաս գաւին, երեսը դէպ ի ժողովուրդ դարձնելով համառօտ և ազդու ատենաբանութեամբ բացատրեց Հայաստանեայցս միակ պարծանք մնացած Հայրապետական Գահի և Գաւազանի նշանակութիւնն, երկու և կէս տարի թափուր մնալով ազգին ու եկեղեցւոյն միասի

մեծութիւնն, անցեալ տարւոյ անյաջող ընտրութիւնն, ասեւեց այս տարւոյ Ապրելի ընտրութեան ի հետեւանս Տ. Տ. Մակարայ հայոցաոոութիւնն ամենայն ուռւսաց ամենողորմած ՑԱՐԻՍՏՆԻ Գ. կայսեր բարեհաճութեամբ: Յաւարտ ատենաբանութեան՝ լուսաբարնելը վերցրին սպասպատ գահն, և Սրբազան Պատարագիչը՝ դարձաւ դէպ ի սեղանը և շարունակելով Ս. Պատարագը նորահաստատ Հայրապետի Ընտնն «ե-ա ա-ա-ե-լ» աղօթքի մէջ. յիշելից որոտացին զանգակները և ճայնակից եղան լուսաթեամբ հանդիսականք՝ բարեմաղթելով առ պատարագեալն Յիսուս իւր Իշման Ս. Տեղին միշտ անսասան պահել յաւիտեանս ժամանակաց բարեխօսութեամբ կենդանի նահատակին և Լուսաւորչին Հայաստանեայց Սրբոյն Գրիգորի՝ տալով նորընտիր Հայրապետին անդորր կեանք և կարողութիւն պահպանել ինքեան աւանդուած Իշխանութեան գահն ու գաւազանը, որ միակ պարծանք և ապաւէն մնացած է յոլորտս սիեղերաց ցրուեալ Հայկազանց:

Ջկնի Ս. Պատարագին կատարեցաւ մաղթանք վասն երկարութեան կենաց ամենողորմած կայսեր ամենայն ուռւսաց ՑԱՐԻՍՏՆԻ Գ-ի և կայսերական տան ի շնորհակալութիւն այն ամեն երախտեաց, որով Հովանաւորում է Մայր Էջմիածնայ և նորան ապաւինածներին կէս դարուց ի վեր, և շարունակում է նոյնն:

Ա՛ռաջին միաբանութեան սեղանատունն ըստ պատշաճին զարդարուած ծաղկօք և ուտելոյ թաղմ ոտեղով՝ նոյնպէս և Հայրապետական Թագն՝ ծաղկեայ շղթանակով սեղանատան փոքրիկ կամուղիկէի ճակատ պրուած՝ քաղցր տպաւորութիւն էին գործում սեղանակից սրտի և դիմաց վերայ. ճաշի ժամանակ երեք Սրբազան Հայք հետ ղՀետէ խոսեցան Հոգեւանդ և համառօտ առենաբանութիւններ, նախ՝ Գեր. Տ. Սերովբէ եպիսկոպոս համառօտ թուելով նորահաստատ Հայրապետի բարեմասնութիւնները՝ առաջարկեց կենաց բաժակ, որ ընդունուեցաւ ցնծութեան ազդակներով և կեցցէներով և ի վերջոյ «Էջմիածին ի հօրէ» շարականով, ապա Գեր. Տ. Մեսրովբ եպիսկոպոս Սմբատեան անդամ Սինոդի համառօտ ծանուցմամբ յոտին կանգնած կարդաց Ա. ԵՒ. Հայրապետի վերև յիշուած շնորհակալութեան հեռագիրն, առաջարկեց բաժակ վասն Հաստատութեան Մայր Էթոռոյ և կենաց Միաբանութեան. գոհարկեցան բաժակներ բարձրագոչ կեցցէներով. ապա Ամեն. Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Տեղակալ երախտագիտութիւն յայտնելով Նորին Սրբութեան Մեծութեան ԱՂԷՔՍԱՆԴՐ Գ. կայսեր ամենայն ռուսաց, որ բարեհաճեց ընդունել Հայրենեան ընտրութիւնն և Հաստատել զՏ. Տ. Մատթէոս ի կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց և ի պատրիարքութիւն Մայր Էթոռոյս՝ առաջարկեց կե-

նաց բաժակ, որ նոյնպէս ընդունուեցաւ կեց-ցէնելով:

Երեկոյեան կատարեցաւ ճրագալոյց. զանգակատան ճակատը փայլում էր լուսեղէն տառերով սոյն վերտառութիւնն «Կեցցէ կաթուղիկոս ամենայն Հայոց Տ. Տ. Մակար», մինչ ժամը 10 բառականաչափ բազմութիւն զբօսնում էին Մայր վանուց գաւթում:

Միաբանի կարդադրութեամբ հրաւիրակ նշանակեցան Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Սպինեան կառավարիչ Թեմին Ղարաբաղու և Գեր. Յովակիմ եպիսկոպոս Տ. Գրիգորեան անդամ Միօրի, գնալ Ռիշնև առ Վեհ. Հայրապետն ազգիս և հրաւիրել ի Սուրբ Էջմիածին ի Գահ Հայրապետական, որք ճանապարհ ելան ամսոյս 28-ին:

Նորին Վեհափառութեան կենսագրութեան համառօտ ցանկն հրատարակելով Ուրարտի նեղկայ համարի առաջին թերթում, ընթերցողները կըտեսանեն որ Նորին Սրբութեան հասուն և փորձառու հասակն, խոհական հանճարն, ծանրաբարոյ և վեհանձն բնաւորութիւնն և եկեղեցական կարգաց հմտութիւնն մեծ գրաւական է թէ ազգի յոյսը պիտի պսակուի, և թէ Նորին Սրբութեան Ընտունը ի շարս ընտրելոցն Հայրապետաց պիտի յիշատակուի հայ եկեղեցական պատմութեան մէջ:

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

(ԾՈՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ)

Ի 22 Ն Օգոստոսի 1885 ամի. Ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինօդի լուսաջադրութիւն Տեառն Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու ի 14 Օգոստոսի տարեւոյս № 8099, յորում գրէ թէ, «Կառավարիչն Նախարարութեան Ներքին գործոց ծանուցանէ թէ ԹԱԴԱՒՈՐ ԿԱՑՍԸՆ ի 18 անցեալ Յուլիսի բարձրագոյնս հաճեցաւ հաստատել զԱրքեպիսկոպոսն Մակար յաստիճանի Վեհափառ Պատրիարք Կաթուղիկոսի Էջմիածնի և Հայկազեան ազգի, արձակելով զնա ի պաշտամանց վիճակաւոր Առաջնորդի Հայոց Նոր — Նախիջևանի և Բեսարաբիոյ և յանդամակցութենէ Սինօդին Էջմիածնի։ Ընդ նմին ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ բարեհաճեցաւ հրամայել, նախ՝ այժմէն իսկ յայտնել Մակար Արքեպիսկոպոսի զբարձրագոյն հաճութիւնէն Նորին յաստիճան Պատրիարքի և հրաւիրել զնա ուղևորել Էջմիածին, ուր նա պարտէ ընդունել զերդումն վասն հաւատարմութեան գահին ամենայն Ռուսաց և զօծումն ըստ ծիսից Հայոց եկեղեցւոյ։ Երկրորդ ի վերայ իսկական հիման 923 յօդուածոյ Ա. մասին 9 րդ հատորոյ օրինաց առաջարկել ի բարձրագոյն տարագրութիւն զՀրամայական (գրամոտ) հաստատութեան Պատրիարք Կաթուղիկոսին Մակարայ յայն առաքման, զոր յեթ զրոշմելոյն մեծ արքունական կնքով, առաքել առ Կառավարչապետն քաղաքական մասին Կովկասու, վասն յանձնելոյ Պատրիարքին զկնի գալստեան նորա ի տահմանս Կովկասու։

Ընդ նմին ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ամենողորմածաբար բարեհաճեցաւ շնորհել Նորին Արքութեան զադամանդեայ խաչ վեզարի և զասպետական նշան Արքոյն Ալէքսանդրի Նեւսկւոյ։

Ջայժմ բարձրագոյն կամաց հաղորդեալ է Սուրբ Սեկրետար Դուրնովն կառավարչին Նախարարութեան այլազգեաց գործոց և Պատրիարք Կաթուղիկոսին Մակարայ, զորմէ պատիւ ունիմ ծանուցանել Սինօդիդ ի հետեւումն առաջարկութեան Նորին ի 26 Ապրիլի այսր ամի № 1338»։

Ի Տեղեկութիւնս գործոյ Սինօդիս երևի ղի՝ ի ժողովել այսր հոգևորական և աշխարհական պատգամաւորաց Հայոց նշանակեալոց յընտրութիւն նորոյ Կաթուղիկոսի ազգիս, հայմաձայն առաջադրութեան Տեառն Կառավարչապետի քաղաքական մասին Կոմիսսաւ 3 | Մարտի / 6 | Ապրիլի այսր ամի № 3343 բացաւ ժողովն ընտրութեան Կաթուղիկոսի ի Տաճարի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի ի 20 և ի 21 Ապրիլի տարւոյս և զսա ընտրութեան պատգամաւորաց նշանակեցան ի կոչումն առաջադոյն կանդիտատաց վիճակաւոր առաջնորդն Հայոց Ջմիւռնիոյ Մելքիսեդեկ Եպիսկոպոս Մուրատեանց և վիճակաւոր Առաջնորդն Հայոց Նոր — Նախիջևանի և Բեսարաբիոյ և աւադ անդամ Սինօդիս Մակար Արքեպիսկոպոսն, որոյ ընտրական թերթիք ի 26 տարւոյս № 1338 առաքեցան առ Կառավարչապետն քաղաքական մասին Կոմիսսաւ, վասն առաջարկելոյ ի հաստատութիւն ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ:

ՀՐԱՄԱՅԵՑԻՆ Ընդել զՀետեւեալս, նախ զանուն Տեառն Ս. Հոգւոյ Աստիսուծեան այսուհետև յիշատակել ի ժամ պատարագի և ի պատշաճաւոր աղօթս ի Տաճարի Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Հանդերձ գոհայոդական մաղթանօք վասն բարօրութեան և երկարութեան կենաց ՏՈՐՈՆ ԿԱՅՍԵՐՈՒՆ ՄԵՆՕՒԻԹԵՆ և բոլոր Օգոստափառ տան նորա, որ ամենազօրմածաբար բարեհաճեալ ընդ ազգային ընտրութիւն պարգևեաց մեզ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ արժանաւոր գլուխ ի պարծանս և ի մխիթարութիւն Համազգեաց մերոց: Նա վասն սովին կարգաւ վարելոյ և ի միս ենթադրեալ Սինօդիս տեսչութեան յեկեղեցիս Հայոց Հեռագրօք Հաղորդել վիճակաւորաց Հայոց Ռուսաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Կարպատահայոց պատուիրելով նոցա զվերոգրեալ Հարթրագոյն բարեհաճութենէ Հրատարակել ի գիտութիւն բոլոր Հայազգեաց պատշաճաւորն բանախօսութեամբ յեկեղեցիս Հայոց իւրաքանչիւր Թեմի:

Երկրորդ՝ պատշաճաւոր հեռագրով ի դիմաց Ա-ռենականաց Սինոդիս և ուխտի բոլոր Միաբանու-թեան Էթռուայս շնորհատրել նորոգ հաստատեալ Կաթուղիկոսի Ազգիս զՆարձրագոյն բարեհաճու-թիւն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԱՆՈՒԹԵՐՆ ընդ հաստատութիւն նորա յայն վեհ աստիճան Պատրիարքք—Կաթուղիկոսութեան:

Երրորդ զհաստատութենէ Նորոյ Կաթուղիկո-սի ամենայն Հայոց հեռագրով և առանձին գրու-թեամբ հաղորդելով Պատրիարքին Հայոց Կ. Պօլ-սոյ, հրաւիրել զՆորին Նարձր Սրբազնութիւն ի միաբանական օրհներգութիւն վասն երկարութեան կենաց Թագաւոր Կայսեր ամենայն Ռուսաց և Վե-հափառ Սուլթանին Տաճկաց, ընդ որոց հովանա-ւորութեամբք համակենայք մեր ի Ռուսաստան և ի Տաճկաստան վայելեն զազատութիւն բարօրու-թեան և խաղաղաէտ կենցաղավարութեան. և

Չորրորդ զՆարձրագոյն հաստատութենէ Վե-հափառ Կաթուղիկոսի ազգիս Տեառն Տեառն Մա-կարայ հրատարակել միջոցաւ Ընդարատ ամենագրոյ: Իսկ վասն նշանակելոյ և առաքելոյ զյատուկ հրա-ւիրակս ի ճանապարհորդակցութիւն Նորին Էթ-ռուս Սրբոյ Էջմիածնի տալ առանձին զեկուցումն:

ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՔԻԱՆՑ վանահայր Երնջակու Ս. Կարապետի վանաց անցեալ Յունիս ամսոյ 15 առաւօտեան ժամը 9 ին հանգեաւ ի Տէր 63 տարեկան հասակում:

Հանգուցեալը 1831 Յուլին մտնելով Մայր Աթոռոյս հոգեւոր դպրոցը յաջակերտութիւն՝ 1839 Յուլին սաացել է չորրորդ աստիճան դպրութեան, 1842 Յուլին ձեռնադրուել է Սարկաւագ եւ 1849 Յուլին՝ Աբեղայ:

Ըստ կարգադրութեան Սինօդի 1849 Յուլի Սեպտեմբերի 25 ից — 1852 Յիւլը Մայր Աթոռոյս հոգեւոր դպրոցում վարել է ուսուցչի պաշտօն. 1852 Յուլին նշանակուել է քննիչ երեւանու Թեմի հոգեւոր գործերի, եւ նոյն Յուլին սաացել է ծայրագոյն աստիճան վարդապետութեան: Ըստ առաջարկութեան Հանգուցեալ ի Տէր Ներսէս Ե. Կաթուղիկոսի ամենայն Հայոց 1857 Յուլի Յունուարի 12 ին Բարձրագոյնս հաստատուել է անդամ Սինօդի եւ նոյն Յուլի Ապրելի 15 ին Սինօդի օրագրութեամբ նշանակուել է տեսուչ Մայր Աթոռոյս Տպարանի: 1858 Յուլի Հոկտեմբերի 13 ից Սինօդի օրագրութեամբ նշանակուած լինելով տեսուչ Մայր Աթոռոյս դպրանոցի, նոյն պաշտօնը վարել է մինչեւ 1860 Յուլի Յունիսի 1 ը: Տպարանի եւ դպրանոցի տեսչութեանց պաշտօնը ջերմեռանդութեամբ վարելուն համար վարձատրուել էվարդ ապեռսական լանջական ականակուռ խաչով եւ կերպասեայ ծաղկեայ փիլոնով. 1859 Յուլին հանգուցեալ ի Տէր Մատթէոս կաթուղիկոսից ծեռնադրուել է Եպիսկոպոս եւ ստացել է եպիսկոպոսական պնաղէ: 1860 Յուլի Օգոստոսի 1 ից մինչեւ 1861 Յուլի Մարտի 1 ը վարել է Երեւանայ Թեմական փոխանորդի պաշտօնը եւ ստացել է Արքեպիսկոպոսութեան կոչումն: Ըստ կոնդակի հանգուցեալ ի Տէր Մատթէոս կաթուղիկոսի 1861 Յուլի Նոյեմբերի 30 ից մինչեւ 1862 Յուլի Սեպտեմբերի 15 ը վարել է Մայր Աթոռոյս դպրանոցի տեսչութեան պաշտօնը: 1868 Մարտ 7 կոնդակաւ ի Տէր հանգուցեալ Գէորգ Դ. կաթուղիկոսի նշանակուել է առաջնորդ Գաւրիժու. 1874 Մայիս 25 արձակուելով նոյն պաշտօնից նշանակուել է յաջորդ հին Նախիջեւանու եւ 1875 ին արձակուելով նոյն պաշտօնից նշանակուել է վանահայր Երնջակու Ս. կարապետի վանուց, ուր եւ մինչեց իր մահկանացուն:

Օրհնելով յիշատակը հանգուցեալին աղօթենք առ Աստուած դասել նորան ընդ սուրբս եւ ընդ սիրելիս յարքայութեան իւրում. ամէն: